

Հ Ի Ն Գ Օ Ր

ՃԱՆԱՊԱՐՀԻ ՄՏՔԵՐ ՈՒ ՏՊԱԽՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Լ Է Օ Ի

(Նաբունակութիւն և վերջ ¹⁾)

Թխենիների տակ ճաշելուց յետոյ՝ վերջին անգամ մոնումենք վանքը: Վարդապետը «հոգոց» է ասում, մենք դուրս ենք տալիս փառաւոր շիրիմներին, Աղանից կաթուղիկոսների եկեղեցուն, երեսներս խաչակնքում ենք ու դուրս գալիս:

Ժամի մէկն է: Երկինքը պղտոր, ամպամած. արեգակը երբեմն նայում է, մի թույլ, աշնանային լոյս է տարածում, որ աւելի վատացնում է մեր հոգեկան տրամադրութիւնը: Մեր հրաժեշտն ենք տալիս վանահայր վարդապետին, բռնում ենք ձիերի սանձերից և ոտով իջնում ենք վանքի քարէ ճանապարհով: Հասնելով մեզ ծանօթ առևտրական հրապարակին, դուրս ենք գալիս ճանապարհից, անցնում ենք Խաչենագետը: Գնում ենք այցելելու գետի միւս կողմին գտնուող աւերակները: Բաւական բարձրանալով, հասնում ենք այն տեղին, ուր երևում էր գիշերային կրակը. ես սխալած չէի՝ այստեղի տաւարածները փոքր տղաներ էին, իսկ նրանց շները՝ շատ կատաղի: Նրանք ցոյց են տալիս այն թումբը, որի վերայ կայ մի հին եկեղեցի: Գնում ենք մի հնձած արտի և մեծ անտառի սահմանով, բարձրանում ենք մինչև թումբի կէսը. այդտեղ մի գիւղացի է պատահում: Նա շատ լաւ մարդ էր, այնպէս քաղցր և համեստ՝ որ

¹⁾ Տես «Մուրճ»-ի № 1.

առաջնորդեց մեզ դէպի աւերակները: Այդ աւերակները յայտնի են Վարպաւսներ՝ անունով: Թումբը, որի վերայ կանգնած ենք, ունի լայնանիստ լանջեր, որոնք երեք կողմից աստիճանաբար իջնում են Խաչենագետի վերայ. լանջերի երեսին երևում են բազմաթիւ տների տեղեր. իսկոյն երևում է, որ մենք գտնուում ենք մի վաղուց անյայտացած և միայն իր գոյութեան ողորմելի հետքերը թողած գիւղի կամ գիւղաքաղաքի մէջ: Նկեղեցին մի հասարակ շինութիւն է. նորա կորին բաժն է մի ահագին ծառ, որ, երևի, շուտով կը քանդէ մնացածը: Գիր ու չիշատակ չը կայ:

Այդտեղից բարձրանում ենք մի ցածրիկ ու երկար պատի մօտով, որ շինած է քարերի մեծ մեծ սալերից և կիսով չափ ծածկւած է ծառերի տակ: Պատի վերին կողմում տեսնում ենք մի քարաշէն տուն, որի կէսը փլւած է: Ծառերն ու մացառները ամեն կողմից հաւաքւել են շինութեան գլխին և խեղդում են: Մտնում եմ մի դրնով, բայց շէմքից դէն անցնել չեմ կարողանում. կոտորը փլոււ է, ինչպէս ասաց գիւղացին, երկու թէ երեք տարի սրանից առաջ. սենեակը լցւած է քարով, հողով և ծառերով. մի քանի տարուց յետոյ ծառերն այնքան կը մեծանան, որ այլ ևս տեղ չեն գրտնիլ ազատ աճելու, զօռ կանեն, պատերը կը ջարդեն, կը կործանեն. այսպէս է անտառոտ տեղի աւերակի վիճակը: Պատերը տաշած քարերից են և վերևում կամար են կազմում: Երեք այգիսի սենեակներ տեսանք: Արձանադրութիւն էլի չը կայ, բայց ժողովուրդը շատ լաւ գիտէ թէ ումինն է այդ տունը: Զալալ իշխանի պալատն է այդ, ասում է քեզ ամեն մի գիւղացի: Երևի հէնց այդ պալատիցն են այս կողմի աւերակները Վարպաւսներ՝ անունը ստացել: Սրտառու՛ւչ անուն, սրտառու՛ւչ աւերակ: Այստեղ էլ երևակայութիւնդ հանգիստ չի մնում. իշխանական տան ներքին կեանքը ուղում է կերպարանք ստանայ, դուրս գալ կոյտ-կոյտ դառած քարերի տակից, ուղում է ցոյց տալ իր առօրեայ պատկերը, բայց միայն ուղում է... տեսնել, լսել անհնարին է. աւերակը լուռ է, խորհրդապահ, սարսափելի համբը ու յամառ: Մի քիչ հեռու մի ուրիշ քառակուսի փոքրիկ շինութիւն էլ կայ, որ բանտ և դիւանատուն է ասում. այս՝ Զալալի դիւանատունն է, ի հարկէ: Ժողովուրդն է այդպէս ասում, ա՛յն ժողովուրդը, որ իր սիրած մարդուն չի մոռանում. վեց հարիւր տարիներ են

անցել այս տեղերի գլխով և դեռ նա գիտէ իր բարեպաշտ իշխանի թողած յիշատակների տեղերը: Այստեղից յետ ենք դառնում:

Այստեղից սկսում է և բարձր ու բարձր գնալով ցցում է մի անտառապատ սար, որի զագաթն այստեղից չի երևում, բայց հեռուից զարմացնում է պատի պէս ուղղաձիգ լանջերով: Այդտեղ, այդ անմատչելի բարձրութեան գլխին է Ջալալի բերդը, որ կուգում է Թարխանաբերդ կամ Խոխանաբերդ: Մի նեղ, ոլորուն, սրտաճաք ճանապարհ է տանում ներքևից մինչև այդ բերդը. ինչպէս պատմում են, դժւար, չափազանց դժւար է այդտեղ գալը. պէտք է շատ տեղ փորող տալ, ճանկուտել զետիներ, որ կտրելի լինի տեսնել մի քանի հին շինութիւններ և ամրութիւններ՝ ծածկած անտառի խորքում: Խոխանաբերդը, բնութեան ահեղ ամրութիւնների սրտում դրած պատերազմական թակարդը, յայտնի է մեր պատմութեան մէջ: Նս կարծում եմ, որ Վարպասների աւերակ դիւղաքաղաքը զագաթի ամրութեան հետ մօտիկ կապ է ունեցել և վերջինս նորա միջնաբերդն է եղած: Աիրակոս պատմագիրը պատմում է թաթարների արշաւանքի ժամանակ այստեղ տեղի ունեցած ահագին կոտորածի մասին:— Ջալալ իշխանը հաւաքում է իր ժողովուրդը և ամրացնում Խոխանաբերդի մէջ. թշնամին տեսնում է, որ չի կարող գրաւել այդ ամրութիւնը, հաշտութեան դաշինք է կապում: Յետոյ զալիս է թաթար Բուղա զօրավարը հարկ հաւաքելու: Մի քանի մարդիկ նորա ձեռքն են մատնում Ջալալին, որ կալանաւորւում է: Բուղան, ասում է պատմիչը, քանդեց իշխանի բերդը— Խոխանաբերդը, Դետը և Միրանաքարը. «և այնպէ՛ս յստակեց, որ հետք անգամ չէին երևում» թէ բնաւ շէն եղած են: Մեր տեսած տեղն էլ լաւ յստակած է. մընացել են միայն տնատեղերը, եկեղեցին և մի հրաշալի աղբիւր, որ թափւում է մի ձորակի մէջ: Խմում ենք այդ անշուք աղբիւրից. ջուրը զարմանալի պարզ է, միանգամայն կարծես բիւրեղ է և այնքան սառն, որ միանգամից չես կարող վրան ընկնել, խմել մինչև կըտանալդ:

Մեզ առաջնորդող բարի գիւղացին, տեսնելով որ մենք ամեն տեղ արձանագրութիւն ենք որոնում, տանում է մեզ մի տեղ. խոտերի և վայրենի բոյսերի մէջնա ցոյց է տալիս մի խաչքարի կտոր, որի վերայ մի երկու տող գրութիւն կայ: Կարդում եմ դժւարութեամբ:

—Քանի՞ տարւայ է, հարցնում է գիւղացին:

—Վեց հարիւր:

—Վեց հարիւր... գոչում է նա ապշած.—Վեց հարիւր... Փա՛ռքդ շատ, Աստուա՛ծ. նրանք այսպէս բաներ են թողել, մե՞նք ինչ պիտի թողնենք:

Ասում է ու վերցնում քարը, դնում մի բաց և լաւ տեղ. մոռացւած քարի կտորը միանգամից ուրիշ նշանակութիւն ստացաւ տգէտ գեղջուկի աչքումն: Նա լաւ գիտէ որ ինքը, և առհասարակ մենք ամենքս, չիշատակ չենք թողնելու. ուրեմն թո՛ղ այդ հնութիւնը իր պատիւն ստանայ: Գիւղացին միշտ կը յիշէ նորան, ցոյց կը տայ. նա, որ ժամանակի երկարութեան մասին այնքան լայն հասկացողութիւն չունի, տեսնում է որ այդ աւերակները հարիւր տարւայ շինութիւններ չեն, խաների ժամանակից մնացած, ինչպէս ինքն է իմացել, այլ վեց հարիւր տարւայ հասակ ունին: Հանաք չէ. ի՛նչպէս պէտք է անես, որ վեց հարիւր տարի քեզանից գործ մնայ, անունդ կարդան և զարմանան: Եւ այս հասարակ քարի կտորը, որ հարիւր տարիներ է մնացել, սովորական քարից բարձր է համարում: Այսպէս հասկացայ ես մեր գիւղացու միտքը նորա զարմանքից, նորա շարժողութիւններից:

Բարի առաջնորդին մեր հրաժարական բարեն ենք տալիս, շընորհակալութիւն յայնում և դիմում ենք դէպի բարձր: Մեր առջևը մի մեծ բարձրութիւն կայ, որ Հաւապտուկ է կոչւում: Գնում ենք նորա գաղաթի հին եկեղեցին տեսնելու. ճանապարհը բարձրանում է անտառի միջով և մենք գոհ ենք, որ առիթ կ'ունենանք վանքի անտառը մօտիկուց տեսնելու: Մտնում ենք անտառը և տեսնում: Խճ, ասեմ: Ո՛րքան երեւակայէք, չէք կարող իրական գեղեցկութեան մասին քիչ մօտիկ հասկացողութիւն կազմել. իսկ ես այդ գեղեցկութիւնը նկարագրել չեմ կարողանում: Մենք ապշած նայում էինք դէս ու դէն: Գերեզմանական լուութեան մէջ, որ տիրած է անտառում, մեր ձիերը զօռով դէպի բարձր են գնում՝ նեղ և վտանգաւոր կածաններով: Իսկ մենք մոռացել ենք վտանգը, նայում ենք և չենք կշտանում: Հսկայ ծառերը կանգնած են միմեանց մօտ, ուղիղ ձգւած են դէպի վեր, կողմնակի ճիւղեր չունին, նաւի կայմերի պէս են և միայն գլուխներն են զարդարել գեղեցիկ տերեւախիտ

գլխարկներով: Հասակի բարձրութիւնը զարմանալի է. Յելս-Չորի ծառերը սրանց չեն հասնիլ: Երբեմն բարձրանում ենք խորխորատների գլուխը. ձին, կարծես, ձգւած լարի վերայով է գնում, եթէ մի անգոյշ քայլ անէ, մտածում ես, մինչև խորխորատի վերջը հասնելը կոյլ միս կը դառնաս. և այդ խորխորատի յատակից սկսած բարձրանում է հսկայ ծառը, դալիս է քեզ հաւասարւում և քեզանից էլ մի սովորական ծառի չափ բարձրանում: Մանաւանդ զեղեցիկ է հաճարկի ծառը, սպիտակ մինչև տերևները, շատ բարձրահասակ և ուղիղ ու կոկ՝ ինչպէս մոմ: Մտերից շատերը կտրւած ընկած են, երկայն տարածութիւն են գրկել և այդպէս փռւում են. բայց նրանցից մէկը մի հասարակ քաղաքացու ձմեռւայ վառելափայտի պաշար կարող է դառնալ. շատերը թէև կանգուն են, բայց կտրւած են՝ տակից չորանալու համար: Դիւղացիները շատ տեղ ծառի կեղևի վերայ ձի, առիւծ և այլ անասուններ են քանդել:

Այս ի՞նչ տեսակ բնութիւն է... Երբ Հաւապտկի գլուխն ենք դնում, մեր առջևը բացւում են նոր նոր լեռնային տեսարաններ և ամեն տեղ նոյն թանձր ու մեծ անտառը: Հաւապտուկն էլ անտառապատ է: Մտնում ենք անտառի խորքը, որտեղից շրջակայք չեն երևում: Ամենաբարձր կէտին ենք հասել. — ահա՛ և եկեղեցին, ծառերի մէջ մտած, մացառներով շրջապատւած մոշի թփերը միմեանց են փաթաթել, չեն թողնում անցնել: Ահ ու դողով մտնում եմ եկեղեցին, տեսնում եմ մի լուռ, մռայլ աւերակ: Այս թանձր անտառում, ուր արջերն ու գայլերն են թափառում, սարի գլխին, հեռու մարդկային բնակութիւնից, աւերակ ու տխուր եկեղեցին սարսափելի տպաւորութիւն է գործում. ընկերներիցս մէկը դալիս է ետեիցս, խօսում ենք ցած ձայնով. վախճում ենք, թէ տեղն է այնպէս, որ չես կարողանում բարձր խօսել. երկու զգացմունքից էլ կան: Նինութիւնը հասարակ քարերից է, ունի բարձր կամարակապ ճաքճաքած կտուր, որի ծեփը ներսից թափւած է, ամեն բոպէ փչելու ես սպասում: Դրսի պատերի վերայ երեք արձանագրութիւն ենք կարդում: Մէկից իմանում ենք, որ եկեղեցին շինւած է 1203 թւին, ուրեմն Գանձասարից էլ վաղ, այնչափանութեան Հառանայ որդւոյ Վախտանգայ և ամուսնոյ նորա Մամքանայ: Նինոջն է մի ոմն Յովհան առաջնորդ. միւս արձանագրութիւնն ասում է. «Յս Աթա-

նա, որ զԳողթին երկիրն գնեցի, Հաւոյ պառակ տլի հայր Գորգիիս: Ինչպէս պարզ երևում է, այս վանքին կից շինութիւններ են եղած, տեղերն այժմ էլ երևում են: Հարաւային կողմից գլխաւոր շինութեանը կցւած է մի կիսաքանդ սենեակ, որի պատերը ծածկւած են զեղեցիկ կապոյտ ծեփով. նորա վերայ կան այս տեղերը այցելողների անունները: Մեկը շատ պինդ է և կարծր, մի շքեղ զարդարուն սենեակ է եղած, սակայն թէ ի՞նչ նշանակութիւն է ունեցել՝ ես չը գիտեմ: Եկեղեցու առջև կան գերեզմաններ և մի քանի խաչքարեր, որոնցից մէկը շատ մեծ է և զարդարւած է զեղաքանդակ խաչով:

Մենք շտապով էինք տեսնում այս բոլորը: Օրը թեքւել էր, պէտք էր շուտ դուրս գալ այս վայրենի և անհիւրասէր տեղերից: Մենք սկսում ենք իջնել Հաւապտի հարաւային լանջով, որ տանում է դէպի մեծ ձորը: Ճանապարհը... բայց ի՞նչ ճանապարհ, աւելի ճիշդն ասած, հետևակ մարդկանց և գաղանների հետքերի տեղը հարիւրաւոր պտոյտներ է գործում, կորչում է ծմակի խորքում, վազում է մեծ մեծ ծառերի ճիւղերի տակով, գլխիվայր գլորւում է թեք-թեք տեղերով: Մենք գնում ենք, քաշքաշւում ենք, իսկ մեր հտեից քաշ են գալիս մեր ձիերը: Ոտնամանի, շորի, դէմքի մասին մտածելը ծիծաղելի կը լինի. կոխ ենք տալիս քար ու ժայռ, թուփ ու մացառ: Վերջապէս մտնում ենք ձորը, որի յատակով մի փոքր ջուր է գնում: Այդտեղ, չը գիտեմ որ կողմից, անսպասելի կերպով գալիս է մեր առջևը մի համեմատաբար լայն ուղի: Հեծնում ենք ձիերը, գնում ենք, դուրս գալիս մի լայն և ուղիղ ճանապարհ. երեսներս դէպի արևելք ենք շուռ տալիս և քիչ ժամանակից յետոյ՝ հասնում ենք Գառնաքար անունով գիւղը: Փոքրիկ գիւղ է այդ, քսան տանից ոչ աւել և զետեղւած է ծմակի ծայրում, ձորի գլխին: Ցաւարածը իր տաւարը հանդից տուն է բերում, ուրեմն շուտով կը մթնի. գիւղացիներից հարցնում ենք Յակոբայ վանքի ճանապարհը, մի կերպ հասկանում ենք, էլի քշում ձիերը: Մութը հետզհետէ կոխում է, մենք գնում ենք մի շատ նեղ կածանով: Մեղանից քիչ հեռու մի գիւղացի կար. հարցրինք նորան ճանապարհի մասին, նա յայտնեց, որ մենք շեղւել ենք և եթէ այդ ուղղութեամբ գնանք՝ կը կորչենք ծմակի մէջ և ո՛վ գիտէ ո՛ր ժայռից ցած կը գլորւենք:— Եւ նա աւելացնում է.

— Օրս գիշեր է դառել, ի՛նչպէս պիտի գնաք. ճանապարհը ծմակի միջով էլ շատ երկիւղալի է. այդ տեղերից մարդն անպակաս է։ Մարդ՝ այսինքն աւաղակ...

Կեանքի մէջ անհասկանալի ժամեր են լինում. մարդ երբեմն ինքն իրան հաշիւ չի տալիս, իր անփորձութեամբ փորձածից բարձր է դասում իրան, մի տեսակ անհոգութեամբ է վերաբերում դէպի նախազգուշացումը, խրատը, այն էլ այնպիսի ժամանակ, երբ նա պիտի լաւ մտածէ, թէ ի՛նչ է անում։ Մենք էլ այդպէս էինք. գիւղացու ասածը առանց որ և է հետեւանքի մնաց։ Վարժես մէկը զօռով հարկադրում էր, որ մենք այս գիշեր անպատճառ վանքը գնանք։ Գնացինք էլ, տեսանք էլ։

Մտանք անտառը։ Բոլորովին մթնել էր, երկինքը վարադուրած էր մութ գորշ ամպերով. լուսինն այլ ևս չէր կարողանում հասցնել մեզ իր աղօտ, անորոշ լոյսը՝ ինչպէս Վարազաբոյնի ճանապարհին։ Գնում ենք անտառի միջով, մի անտառային փոքրիկ կածանով, որ միայն մեր ձիերն են տեսնում։ Այդ անտառը Գանձասարի անտառի ընկերը չէ. այնտեղ ամեն ինչ աշխատում է բարձրանալ՝ մեծ հասակ քշել, իսկ այստեղ մենք մի սովորական անտառում ենք, ուր ծառերն այնքան բարձր չեն և դեռ գետնից չը բարձրացած՝ ճիւղեր են տարածում դէս ու դէն. ծառը փաթաթւում է թուփին, թուփը կուչ է գալիս, ընկնում ճանապարհի վերայ կամ տափականում է, սողում, ինչպէս իր վայրենի կամքին է ցանկալի։ Վայրենի կամք ունի և մեր կածանը։ Նա տանում է մեզ, ուր որ ուզում է, ցածրանում, բարձրանում է, այստեղ ու այնտեղ է գլորւում, դուրս է գալիս, նեղ ժապաւենի պէս ձգւում մի խորխորատի եզերքով, բոլորովին անփոյթ է, որ մենք մեր ձիերով յանկարծ խցկւում ենք այնպիսի խիտ ճիւղերի տակ, ուր կարող ենք աչք ու յօնք պատռել, ոտ ու ձեռք կոտրել։ Այդ նորա բանը չէ, նա չի խոստացել որ ձիեր էլ տանէ. լեռնային ուղի է, կացին չի ղիպել նորա կողքերին, մարդու ոտը մի, հինգ, տասն անգամ կոխել է գետինը և նա գոյութիւն է ստացել։ Մենք գնում ենք միմեանց ետեւից շար ընկած. առաջնորդ չունինք, մեզ յանձնել ենք ձիերի և կածանի կամքին, մէկ էլ բաղդի բերմունքին։

— Բարձր մի՛ խօսէք, ասում են մեզանից երկուսը։ Լռում ենք.

ամենքիս սրտումն է մարդո՞ւի երկիւղը: Անցնենք անձայն, գուցէ չիմանան որ որսեր են դնում: Եւ որքան առաջ ենք դնում, այնքան թանձրանում է անտառը:

Անտառը գիշերով... բնութեան ամենախորհրդաւոր և ծանր տեսարաններից մէկն է: Սարսափելի խաւար է տիրում ծառերի տակ, խաւար, որ կարծես կաշկանդել, անշարժացրել է ամբողջ անտառը. ոչ մի տերեւ չի շարժւում, մի ամբողջ աշխարհ իր բոլոր բնակիչներով կլանւել է, անհետացել: Ոչ առաջն է երեւում, ոչ ետքը և ոչ կողքը. չը գիտես ո՞ւր նայես, ի՞նչ տեսնես: Մարդու սիրտը կուշ է գալիս, կծկւում, մի անկիւն քաշւում. զգացմունք չը կայ, ամեն ինչ կատարւում է մեքենայաբար. գիտակցական շարժողութիւն, կամք, ամեն ինչ կուլ է գնացած խաւարի, ահ ու երկիւղի մէջ: Միայն խելօք ձին է իմանում թէ ո՞ւր է գնում. նա գնում է իրան յատուկ զգուշութեամբ, ճանապարհից չի շեղւում: Երբեմն պատահում են ձորեր. մենք դրանց չենք տեսնում, այլ հասկանում ենք: Լարւած լսողութիւնը դեռ հեռուից է ըմբռնում բարակ ջրի հանդարտ, տխրալի ձայնը. ո՞րտեղից է գալիս և ո՞ւր է գնում—այդ իմանալ անկարելի է. մէկ էլ լսում ես ինչպէս ձիաւորները չրմի-չրմփում են ջրի և ցխի մէջ. անցնում է այդ ձայնը և ձին դարձեալ նոյն սոսկալի լուութեան, նոյն խաւարի մէջ փոխում է քայլերը: Այլ ու ձախ կողմիդ միմեանց յաջորդում են մեծ մեծ սև բծեր, քսւում ես դրանց և իմանում, որ ծառեր են, որոնք ամեն տեղ տարածել են իրանց ձիւղերը: Պաշտպանւի՛ր նրանցից, ինչպէս իմանում ես, թէ՛ և դժւար է պաշտպանւել այնպիսի բանից, որը որոշ չես տեսնում:

Ձը գիտեմ, անտա՞ռն էր շատ մեծ, թէ այդ խաւարը. լուութիւնն ու վախն էր դորա պատճառը, բայց մեր քմահաճ կածանը անվերջ էր երեւում: Տեղի դիրքը չէր փոխւում, իմանում էինք միայն, որ երբեմն իջնում ենք և բարձրանում: Անորոշ դրութիւնը մեզ հասցրեց այն ժամին, երբ ամենքս համարեա՛ համոզւեցինք, որ այս չէ ճանապարհը, որ սատանան գիտէ թէ դէպի ո՞ր կողմն ենք գնում. մեր ձիերի ոտների տա՛կն է կածանը, թէ փախել է կորել և մենք անտառի մէջն ենք ընկել՝ այդ էլ չը գիտէինք: Բայց մենք չենք կանգնում, գնում ենք անդադար, բնազդամբ շարժւում ենք: Միտքը երկար լարւած միալուց յետոյ՝ յոգնում է, բխում, մնում է

մի ինչ որ հասկացողութիւն, որ մի բան է թելադրում. այդ բանը վերջին միջոցն է, որ ամեն մէկը պահում է իր սրտում, չի համարձակւում յայտնել: Յետոյ իմացայ, որ մենք՝ հինգ հոգիներս, միևնոյն վճիռն ենք կացացրել զատ զատ, այն է՝ դնել, մինչև որ բաղդը դուրս կը բերէր մի շատ թէ քիչ յարմար, տափարակ տեղ, իջնել ձիերից, կրակ վառել և նորա շուրջը բոլորած՝ աչք դնել առաւօտին: Ուրիշ ինչ անել, մտածել է ամեն մէկը. վանքը կորել է, անտառը միշտ միևնոյնն է, ճանապարհը մեզանից աւելի է մոլորւած: Լինում են տեղեր, ուր ծառերը նօսքանում են, խաւարն այնքան թանձր չէ. և այդպիսի տեղերում տեսնում էինք, որ մի ինչ որ սև երկար բան է դուրս եկած ձիու ոտների տակից, ընկած է դէպի ուրիշ կողմ— դա էլ կածան է. ձին կանգնում է, չը գիտէ ո՛րտեղով գնայ:

Այսպէս խարխափելով մեքենայաբար առաջ ենք մղւում: Բայց մեր ձիերը ուժաթափ են եղել: Իմ ձին, նկատում եմ, սաստիկ նեղացել է, քրտնել. նա յետ է մնում և միանգամայն անուշադիր է իմ մրտրակի հարւածներին: Նա ձիուց իջնում եմ, յետ չը մնալու համար, ոտով եմ գնում. ընկերներիցս մէկն էլ իջնում է, որ ինձ հետ գնայ: Երեւակայեցէ՛ք իմ դրութիւնը. այժմ ոտներովս եմ զգում, թէ որքան անպիտան բան է մեր կածանը: Ոտներս կամ սայթաքւում են, կամ ընկնում թփերի խորդ ու բորդ տեղերի մէջ, հազիւ եմ ինձ պահում վայր ընկնելուց: Այս ծմակը, իր գիշերային արհաւիրներով, բաւական չէ որ հարկադրում է մեզ հալածականի պէս փախչել, խոյս տալ իրանից, դեռ ոչոք և կարողութիւն էլ է տալիս այդպէս անելու. քրտինք ու յոգնածութիւն մոռացւում են, եթէ վայր էլ ընկնես, դարձեալ կը կանգնես ու անտրտունջ կը գնաս:

Յանկարծ առջնից գնացողը ձայն է տալիս.

—Այլ ևս ճանապարհ չը կայ:

Մենք մօտեցել ենք մի փոքրիկ ջրի, որ վշշում է ծառերի մէջ: Ճրագ ենք վառւում. մեզանից մէկը ճրագը ձեռին առաջ է գնում ճանապարհ դռներու. մենք կանգնած՝ անհամբեր նայում ենք, սպասում նորա վճռին: Տեսնում ենք ինչպէս թոյլ լոյսը երբեմն դուրս է դալիս ծառերի ետևից, լուսաւորում է մեր ձիերի վշատութեամբ կախ արած գլուխն ու ախանջները և նրանց վերայ իջած ճիւղերը:

Անտառի մի փոքր անկիւնն է լուսաւորւած և այդ անկիւնում ըստ-
ւերներ են, որ արագ արագ ոստոստում են, միմեանց վերայ վազում;
միմեանց հետ խառնւում, հսկայական պտոյտներ են գործում ու
փախչում, ընկղմում են խաւարի մէջ: Ճրագի փոքրիկ բոցը լոյսի
խուրձեր է ուղարկում ճիւղերի և բունների միջով, լուսաւորում է
ճահճոտ տեղի վայրի բոյսերն ու բանջարները: Մեր ընկերը զուխը
կախ արած դէս ու դէն է տանում ճրագը և անողում է:

—Գտե՛լ եմ, խօսում է նա վերջապէս Ազատ շունչ ենք քաշում,
թեթեւանում ենք, ուրախանում, որ այդ տեսակ թանկագին գիւտ
ենք արել: Տեսնո՞ւմ էք, թէ մարդու սիրտն ինչով է ուրախանում:
Պարծես մենք լաւ էինք ճանաչում այդ ճանապարհը, կարծես մենք
շատ գիտէինք, թէ ո՛ւր ենք գնում: Այդպէս չէ՞ արդեօք և մեր չար-
քաշ կեանքը. խարխափում ենք, դէս ու դէն ընկնում և մի պա-
տահական ոլոր-մոլոր կածանի յոյս դրած՝ գնում ենք: Գնում ենք,
յուսալով որ կածանը վերջ ունի, մի տեղ կը տանէ և ուրախանում
ենք, կազդուրւում այդ խաբուսիկ յուսով, առանց որի մեր շրջապատը
կարող էր մեր սիրտը ճաքացնել:

Ճրագի լուսով շարունակում ենք ճանապարհը ցլի և ջրի մի-
ջով. այժմ տեսնում ենք, որ մի քիչ դէպի բարձր ենք գնում: Բայց
ճրագն այնքան փոքր է և անգոր այս խաւարի մէջ, որ միայն ան-
որոշ սուերներ է գոյացնում. ձիերը շփոթւում են, չեն կարողանում
գնալ: Ճրագը հանգցնում ենք:

Բայց մեզ համար ուրիշ ճրագ է վառւում. ահա՛ լսում ենք
շնահաչոց և բոլորովին անսպասելի կերպով մեր առաջն է դուրս
գալիս մի պարսպապատ շինութիւն:

—Վա՛նքն է, հասել ենք:

—Փա՛ռք Աստուծու:

Մեծում ենք պինդ փակած դռները, ներսից ձայներ ենք լսում.
չեն ուզում բանալ, ասում են՝ այս ժամանակ դուռ բաց անել չի
կարելի: Ելի «մարդ»-ի երկիւղն է, որ այստեղ տիրում է. առաջնե-
րում աւազակները սպանել են վանահայր վարդապետին և այնու-
հետեւ դռները մթնելուն պէս՝ պնդացնում են: Երկար ու բարակ
բանակցութիւններից յետոյ, դուռը բացւում է, երբ պարզւում է որ
մենք հասարակ ուխտաւորներ ենք: Երկու ժիր շուն սարսափելի ա-

ղաղակներով մեզ վերայ են յարձակում, բայց մենք ուրախ ու հանգիստ անցնում ենք, մտնում վանահօր սենեակը: Ժամացոյցը որոշում է, որ ժամ ու կէս ճանապարհորդել ենք ծմակի միջով:

Մեզ ընդունում են քաղցրութեամբ: Վանահայրը, մի բարձրահասակ և յաղժանդամ վարդապետ, դէս ու դէն է վազում: Մեզ գերել է հանգիստը, իսկ վարդապետը ծառայ չունի և հարկադրւած է անձամբ հոգալ մեր բոլոր պէտքերը. նորան օգնում է ոտքից ու ձեռքից ընկած մի ծեր քահանայ, որ այստեղ աքսոր է ղրկւած մի չհաս պսակի համար: Մէջքը ծալւած տէր հայրը կատարում է հայր սուրբի պատէրները, մի և նոյն ժամանակ քթի տակ իր ազօթքներն է կարդում: Մեզ համար թէյ են պատրաստում. և, տաք կաղդուրիչ հեղուկին աչք դրած, մենք բոլորում ենք, մի մտերմական շրջան կազմում, կամաց կամաց հաղորդում ենք միմեանց մեր տպաւորութիւնները: Ամենքը մի տեսակ խօսքեր են ասում. անտառը բոլորի վերայ մի և նոյն ազդեցութիւնն էր արել:

Թէյից յետոյ դուրս ենք գալիս պատշգամբը և տեսնում ենք երկնքի մի գործը—թխակերը պատուել են և լուսինը տարածել է իր լոյսը: Այսպէս էր մեր բաղդը...

Անցաւ մի ժամ: Մենք մոռացել էինք մեր կրած տանջանքները, այժմ էլի խօսում էինք, ծիծաղում: Մեր շրջանի մէջն առած վարդապետին ու քահանային՝ ընթրիքի նստեցինք: Պարզ և համեստ էր մեր ընթրիքը. ուտում էինք մեծ ակորժակով, մի մի էլ խմում էինք վարդապետի ճեփն կողպէքի տակ պահած, պաշտած, թթու և դեղին-պղտոր գինին: Այսպիսի մտերմական շրջանում շուտ է սկսում և տաքանում ակորժեղի խօսակցութիւնը: Խօսում էինք զլիաւորապէս վանքի և այդ երկու մենաւոր կրօնաւորների ապրուստի մասին: Վանահայրը պատմում է, որ վանքը շատ աղքատ է, համարեա՝ ոչինչ արդիւնք չի ստանում և ոչ էլ մի տեղից օժանդակութիւն: Ո՞րտեղից ստանան: Վանքն ունի կալածներ, բայց շրջակայ գիւղացիները այն աստիճան աղքատ են, որ չեն կարողանում հողը մշակել, անտառներից օգուտ քաղել, էլ վանքն ի՞նչ ստանայ: Գիւղացիների դրութեան վերայ է կանգ առնում մեր խօսքը: Վարդա-

պետն ու քահանան, որ ամեն օր շրջում են գիւղերում, մեզ պատմում են շատ բաներ: Եղեն չունին որ վարեն, ասում են մեզ. երկուերեք տունը հազիւ մի եզն ունի, այդ պատճառով էլ հողերի մեծ մասն անմշակ է մնում: Խնչ եզն. կան գիւղեր, որոնց բնակիչների մեծ մասն անկողին չունի. քնում են շորերը հագած, ծածկելով որ և է գազանի մորթու տակ: Աղքատութիւնը դառն է մըշտական:

Ծանր խօսքեր էին:

Մենք գնում ենք մեծ ճանապարհով, տեսնում ենք գիւղեր, կարծում ենք թէ այդտեղ ապրում են մարդիկ այնպէս, ինչպէս գիւղացին պիտի ապրէ: Նայում ենք, բայց ոչինչ չենք տեսնում: Արտաքինս ուրիշին է այրում, ներքինս ինձ, ասում է հասարակաց առածը: Դա գիւղացու պատասխանն է՝ ուղղած դէպի այն մարդիկ, որ գիւղացի անունը լսելուն պէս, հասկանում են մի մարդ, որի հօրը դեղին ցորենով է լիքը, կարասը՝ իւղով, տաշտը՝ հացով, կթան կովերը կարագ ու սեր են տալիս ամեն օր. և այդ մարդը առատօրէն ապրում է, նահապետական պարզ և լի կեանք է վարում: Այսպէս են հասկանում, բայց այսպէս չէ: Գիւղացի ժողովուրդը—թո՛ղ մի անգամ էլ կրկնւի այս հնացած ու մաշած միտքը—մեզ բոլորովին մի անյայտ ժողովուրդ է, ապրում է իր համար, ապրում է և իր վիշտն ու ցաւը իր շէմքից դուրս չի թողնում: Կը դնաս, կը մոնես—կը տեսնես. չես գնալ՝ երևակայի՛ր կաթնի ու իւղի առատութեան մէջ ապրող մի մարդ: Խոստովանում եմ, ես էլ շատերի պէս էի. իմ ճանապարհորդութեան ժամանակ այնքան գիւղեր տեսայ և ոչ մէկի մէջ մի քիչ չը մնացի, աչքով չը տեսայ, չը հասկացայ նրանց կեանքը: Բայց կարելի՞ է մեղադրել ինձ. հինգ օր ճանապարհին դէս ու դէն ձի քշել, աշխատել գոնէ հարեանցօրէն տեսնել շատ տեղեր,—ես այդ էի միայն կարող անել. ուրիշ միջոց չը կար, հանգամանքների ձեռքին էի, բայց գոնէ հասկանում էի, որ այն չեմ անում, ինչ որ իսկապէս հարկաւոր էր: Այնու ամենայնիւ, որքան և արագընթաց էր իմ ուղևորութիւնը, Խաչենի իմ տեսած մասը միանգամայն ինձ անծանօթ չը մնաց: Պատահական մանր դէպքերը, ճանապարհի վերայ մարդկանց հետ հանդիպումները, կարճ խօսակցութիւնները հասկացողութիւն տւին ինձ ժողովրդի

կացութեան մասին: Եւ ես մի քանի խօսք կ'ասեմ, չը վախենալով որ մի գուցէ ասածներս իրողութիւնից հեռու լինին:

Խաչենի փոքրիկ զաւառում ես ինն թէ տասն զիւղ տեսաւ: Առաջին հաստատութիւնը, որ այդ զիւղերը շատ աղքատ են, ինքը բնութիւնն է: Մի երկիր, որ դաշտեր քիչ ունի, մի երկիր, որի փառքն ու պարծանքը լացնատարած թանձր անտառներն են, մի այդ տեսակ երկիր ի՞նչ է կարող տալ բնակիչներին: Սարերի լանջերին են կպած այդ զիւղերը, ո՛չ լաւ ճանապարհներ ունին, ոչ այնպիսի հողեր, որոնց վերայ երկար կարողանային աշխատել: Անտառը գետնանց համար աշխատանքի դուռ չի բացել և շուտով էլ չի կարող բանալ: Ծմակից, մենք բոլորս այսպէս ենք հասկանում, կարելի է չոր վառելափայտ հանել, ծախել: Իսկ երբ մօտիկում քաղաք չը կայ, աւելորդ է այդ մասին մտածել անգամ: Մնում է տախտակ շինել: Այս արհեստն էլ այնպիսի դրութեան մէջ է, որ ոչինչ է համարում, ամենքը տախտակ շինել չը դիտեն: Մարդը վերցնում է ուրազն ու սղոցը, վերցնում է շատ օրերի համար հաց, ֆնաս բարեաւ է ասում իր ընտանիքին, գնում է ծմակի խորքը. այնտեղ շինում է մի որջ, որի մէջ ապրում է, հարկանութիւն է անում արջերի հետ. ցերեկը բանեցնում է իր ջրհեղեղեան խեղճ ուրազը. վայրենի ծմակի լուութեան մէջ նորան սիրտ է տալիս միայն ուրազի թխկթխկոցը: Երևում է մանր տախտակ, ծմակից դուրս է տանում մի քանի շաբաթից յետոյ, ծախում է այնպիսի գնով, որ մի օրւայ աշխատանքը 40 — 50 կոպէկ է նստում: Այդ է այն օգուտը, որ տալիս են նորան ահագին անտառները: Նրանց խորքում երբեմն պատահում ես այդպիսի տեղերի, ուր զիւղացին տաշել է փայտը և զարմանում ես, թէ ի՞նչպէս է խեղճն այստեղ ապրել, ի՞նչ զրկանքներ է կրել:

Ուրեմն ծմակը զիւղացուն շատ հարկաւոր չէ, մինչև անգամ նեղում է նորան, որովհետեւ բռնել է այն տեղերը, ուր կարելի էր վար ու ցանք անել: Առանց վար ու ցանքի նա ոչինչ է, երբէք չի կարող այնքան փող աշխատել, որ մի տարւայ հացը ուրիշից առնէ, իր տունը դնէ: Հողը, վարելահողն է նորան կերակրողը. հողը չը կայ, նա ապրուստ չունի, եգն չունի, քնում է առանց անկողնի, չոր գետնի վերայ, աղքատ է, այնպէս սաստիկ աղքատ, որ նորա կինն ու երեխան տեսած ժամանակ, լացդ է գալիս: Մի զիւղի ճանապար-

Հին իմ առաջը դուրս եկաւ մի գիւղական աղջիկ։ Մեծացած էր նա, նշանւելու աղջիկէր։ Ինձ լաւ յայտնի է հայի մի յատկութիւնը։ Երբ աղջիկը մեծացաւ, առանից դուրս ձգելու դառաւ, ընտանիքը նորա վերայ է հաւաքում իր բոլոր հոգսերն ու մտածմունքները. աշխատում են որ մեծացած աղջիկը լաւ հագնւի, լաւ երեւայ մարդկանց մէջ. աշխատում են մոռանալ տնային շատ պէտքեր, բերաններից կտրում՝ նորա վերայ են դնում։ Բայց իմ տեսած աղջիկն ի՞նչ ունէր հագած։ Նա երկար մոխիկ էի անում նորա ետեւից, երբ նա քշում էր էշը, մոխիկ էի անում, բայց չէի կարողանում որոշել թէ ինչի՛ց է շորը կարած։ Այսքանը միայն. լաւ իմացայ, որ արխալուղի միայն մի թւէքն էր հագած ուսի վերայ. մնացած արխալուղը գրգռեցած, կախ կախ ընկած կտորների մի հաւաքածու էր, որ երեւում էր նորա մէջքի վերայ և նորա ոտների շարժողութիւնից ծանր կերպով օրօրում էր մի կողմից դէպի միւսը։ Նա քարշ էր տալիս այդ կտորտանքները միայն նորա համար, որ տեսնողը չստէ թէ նա հալաւ հագած է ման գալիս։ Մեր մօտովն անցնելիս՝ նա մեզ վերայ մի հայեացք ձգեց, որ անտարբերութիւն և մի տեսակ արհամարհանք էր արտայայտում։ Բնութեան հարազատ զաւակը հպարտ էր իր ցնցոտիների մէջ. նա, կարծես, չը գիտէր էլ որ ինքը շորեր չի հագած և նորա համար բոլորովին մի և նոյն է, թէ ի՞նչ կը մտածենք նորա համար մենք՝ աւելի լաւ հագնւած քաղաքացիներս։ Ուրիշ տեղեր էլ տեսայ նմանօրինակ պատկերներ։ Գիւղերի մօտ տեսայ մեծ ու փոքր երեխաներ, որոնց վերայ միայն մի կտոր հալաւ կայ, որ ամառ-ձմեռ նորանց հագուստն է, մնացած տեղերը բաց են, երեւում են շոր, բարակ ոտներ, տափակ ու ոսկորացած կուրծք, վտիտ, հողի գոյն ունեցող դէմքեր, և կե՛ղտ, կե՛ղտ՝ որքան կարող է լինել։ Նա, ի հարկէ, չեմ կարող ասել թէ բոլորն էլ այդպէս են։ Բայց թէ տեսածներս հաստատում են մեծամասնութեան դառն աղքատութիւնը՝ դա իմ համոզմունքն է։ Աղքատութիւնն է պատճառը, որ մեծ մեծ գիւղեր չը կան։ Իւրաքանչիւր գիւղ բաղկացած է 7, 15, 35 տնից։

Նա մասնացոյց արի հողի պակասութիւնը։ Բայց պէտք է մատնացոյց անեմ և այն, որ այդ պակասութիւնը կապ ունի չը գիտեմ ծուլութեան թէ աղքատութեան հետ։ Կան հողեր, որ կարող էին արտ

դառնալ, բայց արտ չեն. կան տեղեր, որ պտղատու վարելահող դառնալու համար աշխատութեան են կարօտ. հարկաւոր է մաքրել թփերն ու մացառները, հարկաւոր է աղբով պարարտացնել կամ ջրել: Բայց մեր գիւղացին շատ վախկոտ է. նա չի անում, չի հասկանում որ կարող է անել. նախ պէտք է ասահով լինի, որ մի բան էլ կը ստանայ և ապա աշխատէ: Նորան շրջապատող վայրենի բնութիւնը իր անհամար դժւարութիւններով չի դրել նորա մէջ փորձասէր հոգի, տոկուն, յամառ մրցութեան պահանջ. նա դուցէ չի էլ հաւատայ, որ աշխարհում ասլում են մարդիկ, որոնք ահագին ճահիճներն են վարուցանքի տեղ շինում և հնձում: Անփորձութիւնը, անօգնակա-նութիւնը, դարերի աւանդական խրատը որ և է բանի մասին—այս ամենը հարկադրում է նորան ընդունել խոժոռադէմ և անհիւրասէր բնութեան մօտ մի դրութիւն—աղքատ լինել: Ուրիշ ճար որ չը կայ, աղքատ մնացիր, աղքատ ես և քեզ շատ լաւ են հասկանում Յես-Ջորի, Հաւապտիի, Արջաձորի, Կրատափի և այլ տեղերի անտառները. այսպէս պէտք է հասկանալ դրութիւնը: Իսկ երբ միանգամից աղքատութիւնը կոխում է, մնա՛ս բարեաւ ամեն տեսակ բարօրու-թիւն. հող էլ լինի, չի մշակւի, նա անտրտունջ կը քնէ առանց վեր-մակի և ման կը դայ այնպիսի արխալուղ հագած, որի մի թիւքը միայն կարելի է կուռ գցել: Նախապաշարած է գիւղացին, կաշկանդւած հոգեպէս. իր այդ դրութիւնը ճակատագրական է համարում և երբ տեսնում է, որ հողագործութիւնը մի հատ եզնով գլուխ չի գալիս, ինքն իրեն համոզւում է, որ վարելը նորան չէ տւած, գնում է հեռու տեղեր, ուր արտեր շատ կան, մշակ է դառնում, հնձում ու-րիշի արտերը, որ զոնէ իր ստացած հնձավարձով ապրէ կէս կուշտ և կէս քաղցած: Ինձ պատմում են Քոլատակ գիւղի մասին, որ գորնու-ում է Յակովբայ վանքի մօտ: Գիւղացիները համարեա՛ թուրք թա-փառականների օգնութեամբ և տուրքով են միայն ապրում, երբ նորանք Խաչենաղետի ամերով սարն են գնում կամ սարից գալիս են: Ճանապարհի վերայ առւտուր են սկսում, թուրքերին ընկոյզ, շի-նած մահակներ են ծախում: Թուրք թափառականների շնորհիւ ապրել... երբ այդ թուրքերն իրանք ողորմելի թշուառներ են՝ սար ու ձոր ընկած...

Այս ամենից յետոյ ես մտաբերում եմ ներկայ տարին, որ այն-

քան վատ է, այնքան դառն։ Զափից դուրս անձրևներն այս տարի գիւղացու շատ յոյսերն են փշացրել, դաշտը մի չնչին բան է տւել, այս պատճառով հէնց այժմ, դեռ աշունը չը սկսած, հացի պակասութիւն է։ Ես չը տեսայ մի տեղ, ուր դանգատ չը լինէր։ Խորշակահար արտեր տեսայ, որ թողել են, խմանալով որ արդիւնք չը կայ։ Եղած ցորենը սև է, անհիւթ, հաց չի դառնում, մինչև որ կորեկ չեն խառնում։ Ունեւորների համար էլ զգալի է պակասութիւնը, ինչպէս պէտք է միւսներն ապրեն։ Պէտք է երևակայել, թէ ինչ օրի մէջ կը լինին գիւղացիները, երբ երկիրը ծածկւած կը լինի խոր ձիւնի տակ։ Սարափեկէ՛ բաներ։ Մի քանի ամսից յետոյ ձիւնը կը գայ, այս լեռները, անմատչելի անտառները բոլորովին կը կտրւեն ամեն հաղորդակցութիւնից։ Ո՛րտեղից օգնութիւն ստանան, և ո՞վ կը տայ։ Սովը, ինչպէս և տարափոխիկ հիւանդութիւնը, ամեն անգամ անարգել կարող է գիւղը մոնել, գիւղացու բնից կախել։ Գիւղացին ամեն դէպքում է անպատրաստ և անփորձ։ Պաշար պահել չը գիտէ, հասարակական ամբարի դադափարը երկնքի աստղի պէս հեռու է նորահասկացողութիւնից։ Առատ տարիների թողած աւելորդը վաղուց ծախել, կերել է, այժմ, ինչպէս ասում են, մատը բերանու մէն է մնացել։ Կար մի ժամանակ, այդ գիւղացին ցորենի առևտուր էր առնում։ Փողը չափազանց քաղցր բան է, ունեւորն ու չունեւորը ծախել են այն, ինչ կարողացել են բերանից կտրել։ Սև այժմ ահա պակասութիւն է, թանկութիւն է։—Ո՛ւր դնայ։ Նա ծախել է, որովհետև չը գիտէ որ իրան միշտ պաշար է հարկաւոր, չը գիտէ՝ որովհետև գիւղացի է, որը բացի դրանից շատ ուրիշ բաներ էլ չը գիտէ։ Իսկ նորանք, որոնց ձեռքում կային թւանշաններ և որոնց առաջ գիտութեան թէօրիան շատ և շատ հետաքրքիր հետեւողութիւններ, հաշիւներ էր բացել, ծափ էին զարկում ուրախացած, որ մեր երկիրն էլ արտահանում է հում ապրանք։ Միայն այս փաստը, ցորենով լիքը վագոնների երկար շարքը, ուրախացնում էր և չը գիտէին որ այդ արդիւնահանութիւնը քամում, սպառում է երկրի ներքին ուժերը։ Մոռանում էին այդ պարոնները, որ մեր երկիրը չունի հաղորդակցութեան յարմար ճանապարհներ, որ մեր գիւղացիները ապրում են սարերի և ժայռերի գագաթներին, այնպիսի տեղերում, ուր միայն ամառն է հնարաւոր երկար գնալ ու գալը, պակասութեան,

սովի ժամանակ աղէտալի դրութեան մէջ կը լինեն, առանձնացած լինելով միւս տեղերից: Հիմա հրամայեցէք տեսէ՛ք: Այն տարին մենք էժան հաց տւինք Ֆրանսիացուն և գերմանացուն, նորանք լաւ ապրեցին: Հիմա մենք ենք դժւարութեան մէջ, հիմա էլ թո՛ղ իրանք ցորեն բերեն մեր խաչենցուն կամ վանանդեցուն տան, յետ ստանան իրանց տւած Ֆրանկները: Թո՛ղ ստանան, գիւղացին ուրախութեամբ կը տայ, միայն թէ հարկադրւած չը լինի իր սոված երեխայի բուռը, հացի փոխարէն, երկու-երեք եփած բակլա կամ սիսեռ դնել:

Մենք սխալոււմ էինք, ուրեմն մեր ուրախութիւնը անհիմն էր: Եւ դեռ շատ կը սխալենք, շատ բաների վերայ կ'ուրախանանք, փոխանակ տխրելու, որովհետեւ մեր երկիրը, մեր տունն ու տեղը չենք ուսումնասիրել: Վանահայր վարդապետի պատմածները իմ մէջ զանազան մտքեր են յարուցանում: Ես յանկարծ յիշում եմ ռուսաց զբականութիւնը, մտաբերում եմ թէ վերջին տարիներս ռուս ինտելիգենցիան ի՞նչ տեսակ դիրք է բռնել զէպի գիւղացին: Ուսպէսկի, կոմս Տօլստօյ, Զլատօյլատսկի իրանց գրւածքներով, լրագրութեան մի յայտնի մասն իր քարոզներով անցնում են իմ յիշողութեան միջով: Գեղարեւտը, հրապարակախօսութիւնը, մասնագիտութիւնը միացած, ձեռք ձեռքի տւած՝ մտել են գիւղական աշխարհը, փորում, ուսումնասիրում են, զարմանալի փաստեր են դուրս հանում: Գիւղացու կեանքը, պատկերը պարզւում է, բարձրանում մտածողների աչքի առջև: Ես հաւատացած եմ, որ մեզանից ամեն մէկը, որ գտնէ մի տարի շարունակ ռուսական նոր զբականութեանն է հետեւել, շատ լաւ հասկացողութիւն կը լինի կազմած ռուս գիւղացիների նիստ ու կացի, հոգեկան ընդունակութիւնների, բարի ու չար գործերի մասին: Գրում են և չեն բաւականանում միայն մտքեր առաջարկելով, գրելով: «Գի՛ւղ համեցէք, պարոններ, գի՛ւղ համեցէք», գոչում են նոքա առանց հանաքի, լրջութեամբ, զինուորած բազմութիւ առողջ մտքերով և փաստերով: Հրաւիրում են ինտելիգենտներին, որոնք մայրաքաղաքներում հալւում են, մաշւում, չիմանալով թէ ի՞նչ անեն: Ռուսաց յարգելի թերթերից մէկը, «Нодъла»-ն, ահա՛ քանի տարի է արծարծում է այն միտքը, որ ինտելիգենցիան իր կոչումը կարող է պարզել այն ժամանակ միայն, երբ պատրաստ ու

փափուկ պաշտօնների ետևից վաղելը կը թողնէ և յետ կը դառնայ գաւառները. այդ հարցը այժմ էլ ուսւ պարբերական գրականութեան օրւայ հարցերից մէկն է: Հազւագիւտ բան չեն այս տեսակ նկարագիրները. «Թէ ի՞նչպէս ես սովորեցայ վարն ու հունձր»: Այս տարի «Обверный Восток» ամսագրում տպագրուած էին Գլէբ Ուսպենսկու յօդւածները «ЖИВЫЕ ЦЕФРЫ» վերնագրի տակ, որոնք հիացնում են ընթերցողին. հասարակ ժողովրդի կեանքը, նորա կրած աշխատանքը, ասլուստը այնպէս զեղեցիկ ուսումնասիրւած և մի տաղանդաւոր գրչի տակ նուրբ զծագրութիւններով պատկերացած էր, որ ընթերցողը չէր կարող բաժանել զրքից, չէր կարող չը յափշտակել, չը հիանալ: Մի ուրիշ ամսագրում, («Русская Мысль») նոյնպէս այս տարի, տպւեց Կարենինի «Мой мир» վերնագրով վէպը, որ նկարագրում է մի ինտելլիգենտի զիւղ զնալը և զիւղացիների հետ ապրելը, նորանց բոլոր դաշտային և տնային աշխատանքներին սովորելը: Եւ ո՞ր մէկը յիշես:

Այդ ամենը յիշելուց յետոյ, երբ յետ եմ դառնում մեզ մօտ, տեսնում եմ խաչենցու դրութիւնը իր լեռների և ծմալների մէջ, ես հարցնում եմ. «մի՞թէ մեր մէջ չէին կարող գտնւել մարդիկ, որոնք եթէ ոչ վար ու ցանք անէին, զոնէ ուսումնասիրէին, նկարագրէին այդ կեանքը: Այդ հարցը տալիս եմ ինձ և ծիծաղում: Խնչպէս կարելի է մինչև անգամ այդ տեսակ հարց զնել. բա՛ն չունես, խելքդ գլխի՞դ չէ: Այդ տեսակ սառն, արհամարհական հարցեր կարելի է լսել մեր մէջ: Ո՞վ է գնացողն, անողը: Երիտասարդը համալսարանում ուսում է ստանում և վերջացնելուց յետոյ, քանի որ թարմ է, ջահել է, հարցնում է՝ ի՞նչ անեմ, ո՞ւր գնամ: Իսկ երբ մի քիչ ման է գալիս, աշխարհի համն ու հոտն առնում է՝ տեսնում ես լռեց, այդ հարցն էլ չի կրկնում. նա շտապում է պսակել և մի լաւ իւղալի պաշտօն ձեռք բերել. այնուհետև համալսարանական ուսումը նորա ձեռքում մի զէնք է, որով հասարակ մահկանացուներին կարելի է կռացնել նորա առջև, հեղինակութեան փառքը վայելել: Բայց ինչո՞ւ խօսենք միայն համալսարանականների մասին. ահա ուրիշ դասակարգի երիտասարդներ, որոնք ըստ երևոյթին իրաւունք չը պիտի ունենային պատրաստ պաշտօն ու փափուկ ռոճիկ որոնելու. — գրանք նոյն այդ զիւղացիների

որդիներն են, որոնք մի կերպ միջին ուսման տէր են դարձել: Հէնց որ Սպէնսերի, Բօկլի, Կանտի անունները լսում են և հասկանում նորանց ինչ լինելը, իսկոյն մեծ կենտրոններ են վազում: քանի՜ քանիսը այս րոպէին քաղցած նստած են նոյն իսկ Թիֆլիսում; երևակայում են իրանց մի կերպ նահատակներ, մի կերպ չը գնահատած մեծութիւններ և թշուառ, աննպատակ կեանք են փչացնում: Ոչ միայն գիւղը, այլ և դաւառական քաղաքը — երևակայում են նորանք — չի կարող տեղաւորել իր մէջ նորանց պէս մեծութիւնը. ուստի և փախչում են: Փորձի՛ր հէնց այսպէս խօսել դրանցից մէկի հետ.

— Սպասի՛ր, պարո՛ն, ինչո՞ւ այդքան շուտ փախչում ես այստեղից:

Պարոնս քիթը վեր է քաշում, արհամարհանքով ասում է.

— Կ-ե-ա՛նք չը կայ:

Կեանք չը կա՛յ... Բայց տեսնել մեծ քաղաքի առօրեայ իրարանցումը, խլանալ նորա աղմուկի մէջ, ամեն անգամ երես առ երես շփել անառակութեան, մարդակերութեան, կեղտի և ապականութեան հետ, տեսնել քաղաքակրթութեան արտաքին շուքը, լպստած, զարդարած պատկերը և մի և նոյն ժամանակ հոգեկան դատարկութիւն, ամեն զրկանք կրել — սա կեանք է... Չը կան մշակներ, իսկակա՛ն մշակներ, որոնց համար դործը հոգեկան պահանջ լինէր, որոնց համար աշխատութիւնը պարծանք և երախտապարտութիւն չը լինէր. մենք անում ենք մի բան և դեռ կէսին չը հասած՝ պահանջում ենք, որ մեզ ճանաչեն, պատւեն. և երբ այդպէս չի լինում, վհատում ենք, ընկնում:

— Այս կողմերի զիւղացիները մեծ մասը վերմակ չունի, որ մտնէ նորա տակը ու քնէ, ասում է մի պատահական վարդապետ:

Մենք պլլում ենք, զարմանում... Մի՞թէ այդպէս է...

ՉՈՐՐՈՐԴ ՕՐ.

Ֆիզիքական և հոգեկան տանջանքներից յետոյ հանգիստ քնել, արեգակը ծագելուն պէս վեր կենալ, նայել փոքրիկ և անշուք պատահանով, տեսնել մի պարզ և չքնաղ առաւօտ, որի մի մասը ա-

մառնային է, միւսը աշնանային—կը լինի՞ արդեօք մի ուրիշ բաւականութիւն՝ ես մինչև օրս չը գիտեմ:

Յակոբայ վանքը այսպիսի մի առաւօտ պարզեց: Գլուխս բարձրացնում եմ, Խաչենի խրոխտ լեռների առաւօտը իր հսկայական շւաքներով, ոսկեզօծ գաղաթներով և թարմ, սաստիկ թարմ օդով հալածում է ինձ մեր քնարանից: Հագնւում եմ շտապով, շորերիս կէսը թողնում եմ թափւած և դուրս գնում: Սենեակը, որ մեզ այնպէս լաւ հիւրասիրել է գիշերային մռայլ և տանջանքներով լիքը անտառի ծայրում, մի շատ ողորմելի, աւերակ շինութիւն է: Հարաւային կողմից ունի մի հնացած պատշգամբ, որ շինւած է փշրւած և փսած տախտակներից. այդտեղ դրած է մի հին, կացնով շինած աթոռ, որի տեսքը ծիծաղ է յարուցանում: Նստում եմ այդ աթոռի վերայ և նայում եմ՝ չեմ կշտանում:

Պատշգամբս կանգնած է բլուրի վերայ, որ կազմում է արեւմտեան կողմից եկած լեռնային ծառազարդ բարձրութեան մի լանջը: Իմ առջևն ընկած է մի երկայն նեղ հովիտ, որի միւս կողմից ընկած է մի ուրիշ լեռնաշղթայ: Այդ շղթայի ստորոտով հոսում է Քօլաստակի գետակը, որ յայտնի է իր քաղցրահամ ձկներով: Իսկ ամենաբարձր գաղաթներից մէկի վերայ, առաւօտեան երկնքի կապուտակութեան մէջ, բազմած է Վաչաղակաբերդը: Նա իմ հանդէպն է և իմ ունորա մէջ ուրիշ սար չը կայ, այլ միայն օդի ովկիանոս, որ թոյլ է տալիս ինձ բաւական հեռաւորութեան վերայ տեսնել բերդի մարմինը, որ լուսաւորւած է արեգակի լուսով և բարձրացած խոր ձորերի վերայ, որոնք դեռ ևս ընկղմւած են գիշերւանից մնացած կիսաթափանց կապուտակութեան մէջ: Վաչաղակների բերդը երկար դէպի իրան է ձգում նայողին, բայց անորոշ և անհասկանալի է մնում նորա առջև: Նկատելի են մոխրագոյն սեպացած ժայռեր, որոնք երեք կողմից վիթխարի պարիսպներ են կազմում: Նայում ես և կարծում թէ այդ բերդը շինւած պատրաստւած է մի ուրիշ տեղ և բոլորովին սպառահաբար դրւած է այս սարի գլխին իբրև մի գլխարկ: Դէպի արևելք երևում են լեռներ և լեռներ, որոնք մի տեղ մօտենում են միմեանց և նեղում Խաչենագետը: Այդտեղ երևում է Յելս-Չորի անտառը, իսկ նորա ետևում բարձր է տարել իր գլուխը Պտկի ս. Գէորգի սարը: Նորա գաղաթին կանգնած է մի վանք, որ սպիտակին է տալիս: Իսկ

արևմտեան կողմից ընկած է այս գիշեր մեր անցած անտառը, որի շարունակու թիւնը դալիս է վանքի շուրջը պատում և իջնում դէպի հովիտը:

Լւացելու համար մեզ ուղարկում են վանքի աղբիւրը: Երկու զազան շներից պաշտպանելու համար՝ զինւորում ենք ահագին ձողերով, դուրս ենք դալիս մեծ դռներից և քիչ առաջանալով, ծառերի և կանաչների մէջ գտնում ենք մի ցուրտ աղբիւր: Մեր անցած անտառի մի մասն է և հէնց այս ջուրն էր, որ հարկադրել էր մեզ ճրագ վառել: Այժմ, առաւօտեան պայծառ ճառագայթներով ողողւած անտառը որքա՛ն գեղեցիկ է. տերէն ու խոտը այնքան պայծառ կանաչ գոյն ունին, այնքան թարմութիւն, զովացուցիչ խոնավութիւն են արձակում, առաւօտեան ցօղն այնպէս հեղ ցնցուղներ է տալիս և այս կայտառ ու բարակ ջուրը գնում է կորչում միմեանց պինդ բռնած բոյսերի և պատուտակների մէջ... Որքան անշնորհք լինիս, որքան անծանօթ մուսանների լեզուին, դարձեալ զգում ես, որ կարող ես մի երկու երեք սող նւիրել բնութեան: Հպարտ է այդ բնութիւնը, այնքա՛ն հպարտ, որ հեռացնում է իրանից այստեղ ապրող մարդուն, չի թող տալիս որ այդ խեղճը մի քիչ լաւ ապրէ. նա մարդու ձեռքին չի նւաճւում, բայց և այնպէս որքա՛ն գեղեցիկ է:

Ս. Յակոբայ վանքը հասարակ և անգարդ շինութիւն է: Փոքրիկ տաճարը շրջապատւած է բազմաթիւ նեղ ու մթին խուցերով, ծակ ու ծուկերով: Թէև վանքը հին է, Գանձասարից էլ հին, բայց ինչպէս երևում է, շատ անգամ է վերանորոգւած: Նախկին շինութեան քարերը վերանորոգիչները առանց որ և է յարմարութեան և ճաշակի դրել են պատերում, այնպէս որ գերեզմանաքարը սիւնի վերայ է երևում, խաչքարը առաստաղի և պատի մի մութ անկիւնում: Ամբողջ շինութիւնը մի անշնորհք կարկատանի տպաւորութիւնն է թողնում: Ինչ ասել կուզի, այս վանքը Գանձասարից էլ վատ է պահւում: փայտի մասերը փտել են՝ կախ ընկել, աւերակը կատարեալ աւերակ է: Բայց սա էլ հին ժամանակները հռչակաւոր վանք է եղել և, կարծեմ, աթուանիստ: Նորա վիճակը կուշելիս է եղել Մեծարանց վիճակ: Պատերի մէջ դրած հին քարերն ունին արձանադրութիւններ: Ժամատանը կայ Յակոբոս արքեպիսկոպոսի և «Մե-

ծարանց ¹⁾ Հայրապետի գերեզմանը, որի արձանագրութիւնը կրում է 1223 թւականը: Գաւթում թաղած է Աղւանից Յովհաննէս կաթողիկոսը, մի տեղ դրած է մեծ իշխան Ջալալի որդի Յովհաննէս կաթողիկոսի խաչքարը: Իսկ մի ուրիշ արձանագրութիւն, որի գլխին դրած է «Ջալալին հրաման», վկայում է որ Մովստեղ անունով հոգը վանքին է նւիրւած 1251 թւականին: այժմ էլ այդ հոգը վանքի սեպհականութիւնն է: Ջալալ և Ջալալ իշխան ամեն տեղ... Ամեն քարի վերայ, ամեն մի մամուլատ արձանագրութեան մէջ, ծմակներին խորքերում, սարերի ճակատին և ձորերի յատակում միշտ այս անունն է յիշուում...

Վանքի նշանաւոր սրբութիւնն է Մծբնայ Յակովբ Հայրապետի աջը, որ մեծ յարգանք ունի Ղարաբաղում: Աջը դրած է մի փոքրիկ խուցի մէջ, փայտի փոքրիկ զմբէթի տակ: Հիւանդութիւնների, երաշտի և ֆնասակար անձրեւների ժամանակ, աջը տանում են գիւղերը, Նուշի, Թափոր են անում: Այս վանքն էլ ունի կալւածներ՝ մօտ երեք հազար դեսեատին տարածութեամբ, բայց, ինչպէս ասացի, արդիւնք շատ քիչ է ստացւում: Իսկ Թեմական դպրանոցի գանձարանը այսօրեւից կոպէկ չի մտնում:

Ս. Յակովբի աջը համբուրելով՝ ձի ենք նստում և շարունակում մեր ծանապարհը: Իջնում ենք հովիտը, անցնում ենք մի քանի թումբերով և հասնում ենք Խաչենագետ՝ Առջածոր գիւղի դիմացը, գնում ենք գետի մերկ ափով: Մերկ եմ ասում, որովհետեւ այդ հարթ ու ջրառատ տեղերում այգիներ չը կան: Չարմանալի՝ ծուլութիւն և գիւղական անհասկացողութիւն: Խաչենագետի ձորի իմ տեսած մասում մինչև Գանձասար այգիներ չը կան, եթէ չը հաշւենք մէկը կամ երկուսը: Բնակիչները ուտում են, ինչ տալիս է անտառը—գլեռ, ընկոյզ և այլ վայրենի պտուղներ:

Անցնում ենք Յեկա-Ձորի մօտով և շուտով սկսում ենք բարձրանալ մի ծանապարհով, որ Թանձր անտառի միջով տանում է դէպի

¹⁾ Հ. Ինճիճեանը («Ստորագր. հին Հայաս.») վիշում է Արցախի նահանգում Մեծիրանք գաւառ, բայց նորա համար առանձին չի խօսում, որովհետեւ անպատ է գաւառի տեղը: Այս արձանագրութիւնը պարզ ցոյց է տալիս, որ հին Մեծիրանք այժմիս Խաչենի մի մասն է:

Պտկի սուրբ Գէորգ: Մմակը Յելս-Ձորի ծմակին նման չէ, թէև նորա հարեանն է, ծառերն այնքան բարձր չեն:

Ես չեմ նկարագրում այդ ճանապարհը. իմ ընթերցողը, կարծեմ, մինչև այժմ պատմածիցս հասկացել է թէ ի՞նչ է լեռնային ճանապարհը Ղարաբաղում. այսքանը միայն կ'աւելացնեմ, որ այդ ճանապարհը շատ երկար է, գնում է սարն ի վեր, միշտ և միշտ դէպի բարձր: Մեր տանջւած ձիերը դեռ ճանապարհը չը կիսած՝ յոգնում են, բոլորս իջնում ենք և ոտով բարձրանում, տեղ տեղ հանգստանալով: Դեռ լաւ է, որ արեղակը շատ չէր այլում. եթէ այդէր, չը գիտեմ ո՛րքան քրտինք պիտի թափէինք: Կէսօրից անց հասնում ենք Ուլուքաբ անունով փոքրիկ գիւղը, որ մի շատ գեղեցիկ տեղ է ընկած: Տները (մենք համրեցինք՝ տասն և մէկ հատ էին) միմեանց կողքի են շինւած և նայում են մի լացն փողոցի վերայ: Տեղը բլրի զազաթ է, ծածկւած կանաչ խոտով. կանաչ լանջիվերը վերջանում է մի անտառապատ ձորի մօտ, իսկ նորանից դէնը երևում են նոյն տեսակ կանաչ տեղեր ծմակների մէջ: Մի քանի տասնեակ տարիներ սրանից առաջ է գիւղն այստեղ շինւել. առաջներում Ուլուքաբը եղել է Խաչենագետի ափին, բայց, պատմում են, մի ինչ որ հիւանդութիւն մի քանի տարի շարունակ բոցն է դրել գիւղի մէջ և շատ մարդ է կոտորել, գիւղը ցրւել է, մի մասը ուրիշ գիւղեր է գնացել, մնացորդը բարձրացել է այս բարձրութեան գլուխը: Բայց, երևի, հեշտ չէ Խաչենի գեղեցիկ տեղերը գրաւելը. ուլուքաբցիք շատ դժւարութիւններ պիտի կրեն ջրի պակասութեան պատճառով. մի բեռն ցորեն աղալու համար՝ նորանք պիտի իջնեն այդ բարձրութեան գլխից, Խաչենագետի վերայ շինած ջրաղացների օգնութեան դիմեն. ես, որ այդ ճանապարհը տեսել եմ, ասում եմ, որ ահագին դժւարութիւն է մի բեռն ցորեն աղալը:

Ուլուքաբի մօտից երևում է բարձրութեան գլխին նստած վանքը, դէպի ուր տանում է մի քարքարոտ և դժւար կածան: Գնում ենք այդտեղով և քրտինքի մէջ կորած, միանգամայն փշրւած հասնում ենք վանքը: Մենք այստեղ պիտի գիշերենք և մեր ձիերին հանգիստ տանք: Մենակ մենք չէինք. օրը շաբաթ էր և կային ուրիշ ուխտաւորներ էլ:

Սուրբ Գէորգի սարը շատ բարձր է. վանքի տեղը այդ սարի

ամենաբարձր կէտն է և շրջակայ ուրիշ սարերը—Վաչաղակաբերդ, Գանձասար բաւական ցած են երևում: Մարդու առջև լայն ու մեծ տեսարան է բացւում, հօրիզոնը շատ հեռու է գնում և այս բարձրութեան գլխին կանգնած՝ կարելի է տեսնել բիւրաւոր զանազան տեսարաններ և տեղեր: Նայում են դէպի արևելք.—անսահման տափարակ տարածութիւններ, այժմ դեղնած, անկենդան փռւած են այս հսկայի ոտների տակ: Հսկան այնպէս տիրաբար բարձրացրել է իր գլուխը, որ ամեն տեղից ցոյց է տալիս իր տիտանական հասակը: Ստում են՝ որ այստեղից երևում է Կուրը, երկաթուղու Եւլախ կայարանը. իսկ այս կողմերի մի բնակիչ հաւատացնում էր, որ Բագուից շատ հեռու չը գտնուող Հաջի-Կարուլ կայարանից էլ տեսնւում է Սուրբ-Գէորգը. կարող էք երևակայել թէ՛ ո՛րքան բարձր է սա և ի՛նչպիսի յաջող տեղ է կանգնած, որ հարթավայրերի նեղ, կուշ եկած հօրիզոնից վեր է գնում այնքան հեռաւորութեան վերայ: Հիւսիսային, արևմտեան և հարաւային կողմերում երևում են անթիւ սարեր, հովիտներ, երևում է Շուշին, կարծես ձեռքի ափի վերայ դրած, երևում են և Շուշուց դէնը դռնուղ սարերը: Նս կ'ասեմ, որ մի օր, երկու օր այստեղ ֆնալով և չորս կողմից նայելով՝ չի կարելի ամեն մի տեսարան զատ զատ տեսնել, հասկանալ և նկարել. այնքան շատ են նորանք, այնքան տեսակ տեսակ, որ մի, երկու ժամուայ ընթացքում աչքը միայն մէկից դէպի միւսն է վազում և միայն հարթավայրի ընդհանուր տեսքն է տեսնում:

Վանքի տեղը, ինչ ասել կուզի, գեղեցիկ է, բանաստեղծական: Սեպտեմբերի սկիզբն է արդէն, բայց խոտը դեռ կանաչ է և թարմ: Թանձր անտառը սարի բոլոր կողմերից բարձրանալով՝ զալիս է, վանքի շուրջը մի բոլորակ կազմում: Վանքը մօտաւորապէս երկու հարիւր տարւայ շինութիւն է, հասարակ, զուրկ հին վանքերի գեղեցիկ քանդակներից. մինչև անգամ վանքի հիմնադիր Յովսէփ վարդապետի արձանագրութիւնը քարի վերայ չէ, այլ աջակողմեան խորանի կամարակապ առաստաղի ծեփի վերայ: Այդ խորանում գտնւում է հիմնադրի գերեզմանը, որի վերայ մոմ են վառւում. իսկ բեմի առաջ մի ուրիշ գերեզման ծածկւած է բազմաթիւ մոմերով—այդ է ս. Գէորգի մասունքների պահարանը, որ մեծ քանակութեամբ ուխտաւորներ է բերում Ղարաբաղի ամեն կողմերից: Ներսից էլ շինու-

Թիւնը անպաճոց՝ է, բայց լաւ ոճ ունի. կտուրը դարձեալ խախտ-
ւած է և ջրի կաթիլները այստեղ էլ աւերմունք են գործում:

Աշնանային ցուրտը, որ ամբողջ ամառը այս տեղին շատ այցե-
լուծիւններ է անում, այժմ վերջնականապէս հաստատուել է. ամեն
կողմից փչում է թէև ոչ սաստիկ, բայց բաւական ցուրտ քամի, որի
համար ոչ մի արգելք չը կայ, աղա՛տ է այստեղ, ինքնիշխան: Ա-
րեգակը հաս ու հաս է Պանծասարի լեռներին, որոնց ետևումն է
մայր մոնում: Մենք դէս ու դէն ենք շրջում և ցրտից կուչ եկած
մոտածում ենք՝ թէ ի՛նչպէս պիտի գիշերը լուսացնենք: Թէև ամառ-
ւայ տօներին այստեղ թափուում է ուխտաւորների ահագին բազմու-
թիւնը, բայց ոչինչ յարմարութիւն չը կայ նորանց համար. երկու
հատ սենեակներ կան, որ կարող են ապաստանարան դառնալ. դը-
րանցից մէկում ապրում է վանահայր քահանան, մի ինչ որ անձ-
նաւորութիւն, որ թողնելով իր տունն ու տեղը հեռու Սիւնիքում,
առանձնացել է այս սարի գլխին և բոլորովին մենակ է—ինքն ու
մէկ էլ ինքը. երկրորդ սենեակը, մի հին ու մոռացւած շինութիւն,
որ սակայն ամբողջ է և ամուր կազմածք ունի, աւելի զո՛ւմ է, քան
տուն: Իսկ մենք քնելու շոր, մինչև անգամ հաստ վերարկու էլ չու-
նինք, ուրեմն ի՛նչ կը լինի մեր դրութիւնը: Շատ տխուր հարց է, մանա-
ւանդ մի այսպիսի տեղ, ուր բնութիւնը հաստատակամութիւն չու-
նի և ուզած ժամանակը ցոյց է տալիս իր այլանդակ քմահաճու-
թիւններից մէկը. Պանծասարի գլխին հաւաքւել են ամպերը, որո-
տոցի թոյլ ձայնը մեր ականջին է հասնում: Մենք տեսնում ենք թէ
ինչպէս թափուում է անձրևը Պանծասարի գլխին. երկնքի մի ծայ-
րում հաւաքւել են ամպերը, կախ ընկել երկրի վերայ, իսկ մայր
մոնող արեգակը մի կողմից իր ծուռ ճառագայթներով լուսաւորում
է այդ ամպերն ու անձրևը, որոնք հետզհետէ դէպի մեզ են գալիս:
Սպասում ենք դրանց ճնշւած, վհատւած սրտերով: Բայց անձրևա-
բեր ամպը անցնում է մեզանից բաւական հեռու և անշարժանում
է երկնքի մի ուրիշ կողմում:

Հետզհետէ գալիս են ուխտաւորներ, բերում են ոչխարներ. նո-
րանք իջնում են բաց երկնքի տակ, կրակ են վառում, փռում են
կապերոններ և իսկոյն իրանց բանին ու գործին են կենում. որը գը-
նում է ջուր բերելու Ուլուբաբ գիւղի մօտից, որը փայտի պատ-

րաստութիւն է տեսնում. մարդ ու կնիկ, հարս, աղջիկ, երեխայ միմեանց են խառնւում. մեռած, սառած զազաթը կենդանութիւն է ստանում: Բայց ուխտաւորները զիւղացիներ են:

Այդ իրարանցումը, հանաքն ու ծիծաղը, բարձր ու հանդարտ խօսակցութիւններն ինձ վերայ շատ ակորոժելի տպաւորութիւն են գործում, և ես կանգնած տէրտէրի սենեակի կտրին՝ խորին ուշադրութեամբ դիտում եմ դրանց, տեսնում եմ հայ զիւղացու կեանքի նշանաւոր երևոյթներին մէկը. տեսնում եմ և յիշում իմ մանկութիւնը, այն երջանիկ և միշտ քաղցր ժամանակները, երբ այնքան ոպեւորւած, ուրախ և զւարթ մենք էլ ուխտ էինք գնում, տեսնում էինք շատ տեղեր, շատ մարդիկ. կարելի՞ է մոռանալ այն հոգեկան երջանիկ տրամադրութիւնը, այնքան մեծ ուրախութիւնը...

Ուխտագնացութիւնը, այո՛, հայ կեանքի մի հասոյ երակն է կազմել և այժմ էլ կազմում է: Անյիշելի ժամանակների սրբագործած այդ սովորութիւնը իր մէջ ծածկած ունի շատ խորհրդաւոր, շատ հետաքրքրական գծեր: Մեր ժամանակը իր վայր ու վեր անող, դէմք ու կերպարանք փոփոխող ձեռքերով դեռ չի մօտեցել այս սովորութեան, չի խախտել նորա հիմքերը. էականը, հնութեան կրտակած կարգն ու կանոնը, ծէսն ու արարողութիւնը մնացել են և դեռ շատ կը մնան: Էականն ասացի, որովհետեւ մի քանի երկրորդական կողմերը փոխւում են իրանց կերպարանքը, կապ ունին ժողովրդի արտաքին կենցաղաւարութեան հետ, որ, ինչպէս յայտնի է, ժամանակի փոփոխութիւններին է ենթարկւած: Քաղաքն ու նորա քաղաքակրթութիւնը զիւղերի վերայ մեծ ազդեցութիւն են գործում. հին, նահապետական օջախը երկաթի վառարաններին է իր տեղը տալիս, մեծ փափախը՝ մահուտի թեթև զլխարկին. և զիւղացին, որ օտարութեան մէջ քիչ շուտաւարութիւն է և փող է ձեռք բերում, փոխւում է շատ անգամ իր կնոջ հազուստն անգամ. այս է պատճառը, որ ուխտատեղերում տեսնում ես զիւղական կարմիր հագուստների մէջ եւրոպական ճաշակով կարած հազուստներ, որոնց պակասում է միայն տո՛ւրնիւրը, այն էլ երեւի հեռու չէ: Պանդխտութիւնը, որ դժւարութիւն չունի նաև մեր անչափահասների համար, հաստատել է մեր մէջ մի զբօսասէր հոգի: Մեր ժամանակներն ո՞վ է տեսնել, որ փոքր, տղան այնպիսի երեսպնդութեամբ փողոցում երգէ թրքական զա-

նազան կեղտոտ երգեր, ինչպէս այժմ երգում է կօշկակարի աշակերտը, երբ իր վարպետի ծանր շունչից ազատւելով, երեկոյեան դուրս է վազում խանութից: Նա դեռ չը մեծացած՝ մեծ է, զրպանում պահում է ատրճանակ, և քաջ ձեւանալով զօռ է տալիս կոկորդին, բղաւում է իրան անծանօթ լեզուով, որպէս թէ երգում է լսողը զայրանում է, ուզում է բռնել նորան, ականջիցը ձգել. բայց մի՞թէ դրանով կարող կը լինի կտրել այն բարակ ձայնը, որ երգում է ծծերի գեղեցիկութիւնը, երգում է սիրեկանի հետ անցկացրած գիշերները: Երգիչները շատացել են, պէտք է որ երաժիշտներն էլ շատանան. և ահա պատրաստ է զարմօնիան, ինչպէս մի երաժշտական գործիք, որի վերայ հեշտ կարելի է սովորել: Պատանիների ձեռքին զարմօնիան, պէտք է ասել, շատ է տանջւում, որովհետեւ նորան հարկադրում են հիւսիսային եղանակների տեղ հնչեցնել մեր տեղական ծանր, առաձգական եղանակները, որոնց կախարդիչ ուժը երկար ու ձիգ, բարակ ու ոլորուն ելլէջների մէջն է. իսկ զարմօնիան երբէք չը պիտի կարողանայ այդ տեսակ ձայներ հանել, դրանց համար լեզու չունի. այս պատճառով էլ նա իր կէս եւրոպական և կէս ասիական սրտով ու մտքով միայն ծիծաղ է պատճառում մինչև որ չի ձանձրացնում: Բայց ուխտագնացութեան համար սրանք մանր հանգամանքներ են. նայե՛նք, ուրիշ բաներ տեսնենք:

Ուխտագնացութիւնը պարզում է, հրապարակ հանում ժողովրդի հոգին, նորա մտաւոր կեանքի այնպիսի կողմերը, որ ուրիշ անգամ դիտողութեան տակ չի մտնում: Հեթանոսականը խառնւում է քրիստոնէականի հետ, հաստատելով որ այդ ամեն կարգ ու կանոն ստեղծագործել է ինքը ժողովուրդը, իր խելքի և մտքի ոյժով, որ այնքան պինդ և տաք է պահում մի անգամ հաստատւածը, մի ժամանակ հասկացածը: Տեսնում ես մի ժողովուրդ, որ սիրով և անարբտունջ կրում է իր խաչը, որովհետեւ հասկանում է իր ցաւը և այդ ցաւի դարմանն էլ գիտէ: Ահա բերել են մի ծանր հիւանդ, վերմակների մէջ փաթաթած: Նկատեցէ՛ք, վերջին յոյսը սուրբն է. դեղ ու բժիշկ հեռացած են հիւանդից: Փորձեցէ՛ք մտածել այս դէպքի վերայ. չէ՞ք տեսնում արդեօք թէ որքան առանձնացած, կղզիացած է ժողովրդի միտքը: Աշխարհում կայ և գոյութիւն ունի բժշկականութիւնը, որ վատ թէ լաւ՝ գործ ունի մարդու հիւանդութիւն-

ների հետ. բայց նորա հետ գործ չունի գիւղացին, նորա ձայնին ականջ չի դնում թէ այն պատճառով, որ այդ ձայնը նորան շատ տկար կերպով է հասնում և հեղինակութիւն չունի և թէ իմանալով, որ եօթն բժիշկ մի տեղ էլ հաւաքւեն, ս. Գեորգի զօրութեան չեն հասնիլ: «Ար բռնենք սուրբի փէշիցը», ասում են: Եւ բռնում են, պինդ են բռնում, աղաչում են, պաղատում: Աղաչանք, պաղատանք—ահա՛ այն միակ զօրաւոր զէնքը, որ ունի գիւղացին իր կեանքի դժւար բոլէններում: Նորան կանչում են դատարան, նա չի գնում. և երբ նորան մեղադրում են, դատապարտում, երբ բոլոր դռները փակւում են նորա առջև, նա սկսում է աղաչել, պաղատել: «Տնա՛շէն, ասում են, եթէ այսքան մի սուրբի աղաչէի, հիմա սրտիս ուզածը կատարել էր»: Բայց աղաչանքը կեղծ զէնք չէ, արհեստ չէ, որ գործ են ածում անղգայաբար: Պէտք է իմանանք, որ աղաչանքը, «փէշ բռնելը» հաւատով և յուսով ապրող սրտի խորքիցն է գալիս: Անհասկացող է այդ մարդը, տգէտ է. նայում է իր երկնքին, տեսնում է իրան ծանօթ աստղերը և հաւատացած է՝ որ ուրիշ տեղ, ուրիշ երկրում չը կան այսպիսի երկինք ու աստղեր: Նորան փող է հարկաւոր և նա գնում է վաշխառուի մօտ «հողին գրաւ դնում», փող վերցնում, իր տունը քանդում. այդպէս է անում, որովհետեւ ուրիշ ճանապարհ չի ճանաչում: Միտքն ու հասկացողութիւնը սահմանափակւած են, մի նեղ շրջանի մէջ մտած. և երբ նորա հասկացողութիւնից դուրս բան է պատահում, նա իրանն անել գիտէ: Երբ ծմակում ծառ է կտրում, չիմանալով որ իր տոմսակի ժամանակը անցել է և բռնւում է՝ սկսում է աղաչել. և երբ նորա որդին սաստիկ մրտում է և թոքերի բորբոքումն ստանում՝ նա էլի սկսում է աղաչել, պաղատել: Նորա բոլոր հասկացողութիւնները հաւատի վերայ են հիմնւած, ջերմ հաւատի վերայ. և ինչպէս հաւատում է որ օտար երկինքը աստղեր չունի, այնպէս էլ հաւատում է որ անտառապահը իր աղաչանքին կը լսէ: Ի՞նչ դժւարութիւն կարող է լինել, երբ անկեղծ աղաչանքը, պաղատանքը կայ: Ամենքն էլ սիրտ ունին, ամենքն էլ չարգում են սրտի սրբութիւնը: Եւ տեսէ՛ք: Ամբողջ ընտանիքը մի երկար շարք կազմած, մատաղացու ոչխարը առաջ գցած, ոտաբոբիկ պտոյտ է գալիս վանքի շուրջը. եօթն անգամ պտոյտ է գալիս, յայտնում է որ ինքը, այդ ընտանիքը, սուր-

բի ոտի տակ մատաղ է գնում: Ամենքն այսպէս են համոզւած. մինչև անգամ վեց տարեկան երեխան էլ ունի դէմքի վերայ մի տխուր, աղաչաւոր արտայայտութիւն: Վերջանում է այդ արարողութիւնը, արի՛, նայի՛ր վանքի մէջ. նոյն ընտանիքը սիւների մօտ ծունկ է չոքում և այդտեղից չոքէչոք գնում է դէպի գերեզմանը, մոմ է վառում, ուխտ է անում. բերանը լուռ է և միայն երբեմն ձեռքը բարձրանում է կրծքի վերայ և զարնւում այդ տեղին, երեսը քսւում է քարերին, մինչև անգամ աչքերը թացանում են: Այնուհետև ընտանիքի մեծը ահով և դողով վերցնում է գերեզմանի ծոցից քիչ հող, փաթաթում է և գնում հիւանդի մօտ: Նորան նստացնում են, հողը ջրի մէջ խառնում, տալիս են նորան: Ամենքը երեսները խաչակնքում են, մաշւած հիւանդը խորին յարգանքով և հաւատով խմում է: Մտողական մորմոքւած սիրտը գէթ առժամ հանգստանում է, և ամենքը խօսում են, սովորական անհոգութիւնը մանում է նորանց մէջ. ի հարկէ, չեն էլ կարծում թէ զուցէ հիւանդի այստեղ բերելը աւելի մօտեցնում է օրհասական բոլէն: Ահա՛ սրտեր, որ ապրում են այսպիսի հաւատով: Ես ամենևին փիլիսոփայութիւն չեմ անում. և կարծեմ, ով որ քննէ ուխտաւորների իւրաքանչիւր շարժւածքը, պիտի մի և նոյն եղրակացութեան հասնէ: Ուրիշ ի՞նչ բանով բացատրել: Մենակ հիւանդները չեն ուխտ գնում. ամեն մարդ ունի իր սրտի խորհուրդը, իր մուրադը: Վանքի դրանը դրած է մի փոքրիկ քառակուսի քար, որ ունի քառակուսի լայն ծակ. այդ ծակով անցնում են չբեր կանայք ամուլութեան կապանքներից ազատւելու համար ¹⁾: Մնտախապաշտութիւն է, ի հարկէ, կ'ասեն ամենքը: Ինչ անուն ուզում էք՝ տւէք. բայց կարևոր է ոչ թէ այն, որ մարդիկ սնտոխապաշտ են, այլ այն թէ՛ ինչո՞վ են ղեկավարւում և կառավարւում այդ մարդիկ: Ունենալով կեանքի բոլոր հանգամանքների համար մի այնպիսի կարողութիւն, ինչպէս է աղաչանքը, իր բոլոր գործողութիւնների ժամանակ ունենալով այդպիսի վառ հաւատ, որ երեխայական պարզամտութիւն է առաջացնում:

1) Նոյն այդ տեսակ մի քար ես տեսալ և Հաւապտովի աւերակ եկեղեցու առաջ. ուրեմն այնտեղ էլ մի ժամանակ փորսող են տւել չբեր կանայք: Հաւապտովն էլ, ուրեմն, մի ժամանակ ս. Գէորգի պէս հռչակաւոր ուխտատեղի է եղել:

Ասածներինցս յետոյ թոյլ տւէք ծանօթացնել ձեզ հետ մի անձ-
նաստորութիւն, որ բաւական հետաքրքրելի է, որովհետեւ աւանդա-
կան է մեր մէջ, ունի մի տիպի բոլոր յատկութիւնները: Դա սուրբի
«մուղղութիւն» է, այսինքն լուսարարը և մի և նոյն ժամանակ հլու
ծառան: Դա մի կարճահասակ, սեւ միրուքաւոր մարդ է, ունի տափակ
շրթունքներ, մեծ, սրածայր քիթ և խորհրդաւոր աչքեր. գլուխը
ծածկած է չթիթ աւակով, որ այս տեսակ մարդկանց պաշտօնա-
կան գլխարկն է: Արագաշարժ է, ամեն ծակ ու ծուկ մտնող, դուրս
եկող և շատախօս: Նա գիտէ պատմել, գիտէ իր պատմու-
թիւնները աղով անել, քաղցրացնել. և այդպէս հազար ու մի
բան է պատմում, գլխաւորապէս սուրբ հրաշքները, որոնց ինքն էլ
ականատես է եղել: Երեսուն տարի է, որ նա ծառայում է սուրբին.
անդրադէտ է, բայց այնքան սուր են ականջներն ու յիշողութիւնը,
որ իր մտքի մէջ շատ բան է ամբարել և, ինչպէս ասում են, մի
տէրտէրից էլ շատ բան գիտէ: Նա մեզ պատմում է, թէ ի՞նչպէս մի
օր նորան երեւացել է այս վանքի վանահայրերից մէկը, Ղուկաս վար-
դապետը, որ հարիւր յիսուն և աւել տարիներից առաջ է մեռել:
Դարնան մի արեւ օր էր, ասում է. ես նստած էի այստեղ, մանի-
շակներ շատ կային փռւած, բացւած, ես նորանց մոտիկ էի տալիս.
մէկ էլ տեսայ մի սպիտակամիրուք ծեր վարդապետ, որ ողջոյն տւեց
և յայտնեց ինձ, որ իր գերեզմանը հողի տակ թաղւած է: Վանա-
հայրը բացակայ էր վանքից. ես գնացի ցոյց տւած տեղը, քանդեցի,
գերեզմանաքարը գտայ. վարդապետը եկաւ, տեսաւ և զարմացաւ:
«Մուղղութիւն» ցոյց է տալիս այդ քարը, որ ցից է դրւած մի քանի
ուրիշ գերեզմանների մօտ: Հրաշքով բացւած գերեզմանը ուխտա-
տեղի է դառել. քարը սեւացած է գիւղական պատրոյկների ծխից, տա-
պանագրի միայն մի քանի բառերն են զօռով կարդացուում: Ձեռքը ծո-
ցում դրած, «մուղղութիւն» կանգնում է նորա մօտ և պատմում է
ամեն մէկին այդ հրաշքը, աւելացնում է և այն, որ Ղուկաս վար-
դապետը մի անգամ էլ երեւցել է նորան վանքի մէջ, հրամայել է
յիշողներ չը տալ, բերանը մաքուր պահել: Այդ ամենից յետոյ, ի՞նչ
կարծիք, որ «մուղղութիւն» սուրբի ընտրեալն է, ուստի և պատիւ շատ
պիտի ստանայ ուխտաւոր ժողովրդից: Եւ ստանում է, ինքն է աս-
ում, ապրում է լաւ, նորա գէմքը բաւականութիւն է յայտնում:

«Իդրը մերոնք են», ասում է ցոյց տալով ուխտաւորներին ձմարիս է, նա ինքն է որ այդ զիւղացիներին հրաշքներ է պատմում և աւելի ևս պինդ կապում նորանց ս. Գէորգի հետ: Ես կը բերեմ նորա պատմութիւններից մէկը:

Վանքի արեւելեան կողմում երեւում է մի սալ քար, որ համբուրում են բոլոր ուխտաւորները: Այդ քարը գերեզմանաքար է և, ի՛նչ էք կարծում, ոչ թէ մարդու, այլ... արջի գերեզմանաքար. այդպէս է հաւատացնում մուղղուսին Ահա՛ և պատմութիւնը—Յովսէփ հայր սուրբը, ասում է նա, որ այս վանքը շինել է, սուրբ մարդ է եղել և կանանց երես ամենեւին չի եղել տեսնում: Վանքը շինելիս ժամանակը, մի քանի կին ուխտաւոր են գալիս. հայր սուրբը հեռանում է վանքից, գնում է անտառը: Մէկ էլ լսում է, որ մէկը անտառի մէջ վա՛յ է կանչում մարդու լեզուով, կասես թէ մարդ է: Գնում է այդ ձայնի վերայ, հասնում է տեսնում, որ մի արջ ընկած է թփերի մէջ. հայր սուրբը չի վախում, մօտենում է, ի՛նչ է տեսնում: Արջի մի ոտը ուռել է, մի բռն դառել. նայում է ոտին, տեսնում է որ թաթի մէջ մի մեծ սուր փայտ է խւել, որից ուռել էր ոտը և նա վա՛յ էր կանչում: Հայր սուրբը հանում է դանակը, բռնում է արջի ոտը, սուր փայտը դուրս հանում, վէրքից թարախ է թափւում և վարդապետը պինդ կապում է ոտը, ինքը յետ դառնում վանքը: Գալիս է, տեսնում է, որ չէ՛, արջն էլ է գալիս: Վանքը շինող վարդապետները երբ տեսնում են որ արջը գալիս է վարդապետի ետեւից, վախում են փախչում: Բայց վարդապետը հասկանում է, որ վերեւից է այս հրամանը. բոլորին հանգստացնում է և թողում է որ արջը վանքի մօտ ապրէ: Արջը դառնում է վանքի ծառան, կատարում է ինչ որ հրամայում են: Ինքը, ի հարկէ, խօսել չի կարողանում, բայց, ինչ որ նորան բերանով ասում են, հասկանում է ու գնում: Հայր սուրբը նորա անունը դնում է Վարդան: Վանքի էշերը դուրս են անում և արջ-Վարդանին հրամայում են, որ զնայ գիւղերից վանքի բաժին ցորենն ու գարին հաւաքէ. նա գնում է և բերում. քանի անգամ էլ Գանձակ են ուղարկել, զնացել է ու եկել: Շատ տարիներ այսպէս ծառայում էր. ժամանակ անցաւ, Յովսէփ հայր սուրբը հիւանդացաւ, իմացաւ որ պիտի մեռնէ. այդ ժամանակ արջը Գանձակ էր գտնւում. հայր սուրբն ասաց միւս վար-

դասկետին, որ երբ ինքը մեռնէ ու թաղւի, արջը յետ դառնալով իրան սպանելու է: Այդպէս էլ լինում է. արջը դալիս է, մոմռալով անհանգիստ որոնում է իր բարերարին. նորան յայտնում են, որ բարերարը մեռել է. նա գնում է նստում գերեզմանի մօտ, գլուխը վերցնում է, այնքան զարնում քարերին՝ որ մեռնում է: Նորան թաղում են այստեղ, աջ խորանի առաջ և նոյն գիշերը գերեզմանի վերայ լոյս է գալիս:

Ես, ի հարկէ, «մուղղուսու» պատմութեան կմախքն եմ դնում. պէտք է տեսնել թէ ի՞նչ տեսակ շարժածքներով, ի՞նչ խօսքերով է պատմում նա. կարծես ինքն էլ այդ ժամանակը եղել է և իր աչքով տեսել: Այս տեսակ առասպելների տոպրակ է կարճահասակ «մուղղուսին». նորան լսում են և հաւատում: Զրիակերութեան համար հարկաւոր էր զիւղացու հաւատացող սրտի մի անկիւնում մի փոքրիկ տեղ բռնել. «մուղղուսին» կարողացել է այդ անել, վայելում է իր զիտութեան և իր ընտրեալ հոգու փառքն ու պատիւը: Բոլորը մերոնք են, ասում է:

Օրն անցաւ, երեկոյ է: Լուսինը լողում է բարձր և պարզ երկրնքի. երեսին. իսկ նորա տակ անսահման դաշտալայրերն ու մեծամեծ սարերը ընկղմւած են մի կախարդական լոյսի մէջ: Անընդհատ փչում է լեռնային ցուրտ քամին, մենք մրսում ենք, կուչ ենք գալիս ահագին խարոյկի ծառացած բոցի շուրջը, տաքացնում ենք մեզ: Բոլոր ուխտաւորները քաշւել են իրանց տեղերը, ընթրիք են պատրաստում: Խօսք, աղաղակ ու երգ խառնւած են միմեանց: Մանաւանդ շատ աղմուկ է հանում մի խումբ, որ մեզանից քիչ հեռու է. այդտեղ կան զիւղական ինքնուս երաժիշտներ, մէկը փռւում է իր փողը, միւսը երգում է: Ուրախութիւն է տիրում այդ շրջանում. մերթ ծանր և մերթ արագ ձայնում է փողը, միանման խռպոտ ձայներ է հանում նւագողի հաստ ու կոշտ մատների տակից: Տխուր են մեր եղանակները, մեղամաղձոտ, ճնշւած. նորանք պիտի ազդեն իրանց ծանր, տխրազին հնչիւններով, պիտի ունենան այնպիսի ձայներ, որոնք միանգամայն պիտի սրտից բռնեն: Մենք ուրախանում ենք, զւարճանում տաղտուկ և վհատեցուցիչ եղանակները լսելով. մեր սիրտն այնպէս է, որ գեղեցկութիւնը ըմբռնում ենք նորա ախուր կողմերով միայն. սիրում ենք լսել սիրոյ մասին և

լսում ենք ոչ թէ նորա ձայնը, այլ մեր բերանով տխրամած դէմք ենք տալիս նորան, մռայլ, վհատեցուցիչ գոյներով ենք նկարում թէ ի՞նչ է նա:

Մենք մի փոքրիկ պտոյտ ենք գործում ուխտաւորների շուրջը: Տեսնում ենք ուրախացող խումբը, փողահարին ու երգչին. մնացածները ծափ են տալիս, խրախուսական ձայներ են հանում և գովում են երաժիշտներին. իսկ մէկը, որ երևի ուզում է բոլորի ուշադրութիւնը գրաւել, գուցէ մի նոր փեսայ, տափակ տափակ հանաքներ է անում և ամենքի փոխարէն ինքը կուշտ կուշտ ծիծաղում: Բացւած է պարզ և անպաճոյճ սուփրան, որի շուրջը նստած են նաև կանայք ու աղջկերք, նստած են և լուռ: Անցնում ենք. ահա մի ընտանիք, որ ինչպէս երևում է, շատ աղքատ է և նստած է լուռ ու մունջ, ցամաք հաց է ուտում, շոր էլ չեն բերել իրանց հետ, երևի կը քնեն գետնի վերայ: Վանահայր քահանայի սենեակի առջևով անցնելիս՝ նայում եմ դէպի ներս: Խորին լուսթիւն է տիրում. անկողնի մէջ պառկած է հիւանդը, իսկ նորա գլխի կողմի պատին կպցրած է մի զոյգ մամ. տխուր լոյս է տարածում մի անկիւնում դրած գիւղական կաւէ նաւթածրագը. մի կին արձանացած է հիւանդի մօտ, գլուխը դէպի նորան է կռացրել: Այտուղ ու այնտեղ թափւած են մարդիկ, որն՝ արդէն քնել է, որը քորում է իր գրաստը և որը կոտորում է մորթած ոչխարը:

Մենք էլ վերջացնում ենք մեր ընթրիքը լուսնի տակ: Քահանան մեզ մի վերմակ է տալիս և մենք պառկում ենք չոր կապերտի վերայ, մի կերպ ծածկւում ենք քամու յարձակումներէրից: Բայց մեր տեղը բոլորովին բաց է և գիտենք որ անպատճառ պիտի մըրսենք. կրակի բոցը երբեմն ցած է ընկնում, բաժան բաժան է դառնում և սկսում է սողալ փայտերի վերայ, երբեմն էլի սաստկանում է, բարձր խփում, երբ գիւղացի երիտասարդը խանձողները միմեանց վերայ է հաւաքում: Ես պառկած եմ մէջքիս վերայ, ուշադրութեամբ նայում եմ երկնքին: Այտուղ, այդ բարձրութեան վերայ, մի բան պետք է լինի. այդ գիտէ և կրակի մօտ նստած գիւղացին, որ կէս ժամ առաջ գուշակում էր թէ քամին շուտով կ'անցնի միւս կողմը և մենք նրանցից պաշտպանւած կը լինենք վանքի պատուի: Երկինքը մի բան է պատրաստում. Գանձասարը հանաք չէ անում, այն

կողմից շարունակ ամպեր են գալիս, դիզուում մեր կողմում: Ահա ամպերի միջից լսում է մի թույլ թնդիւն. անցնում է մի քանի րոպէ, կայծակը սկսում է կայծեր հանել: Տեսարանը զեղեցիկ է: Այստեղ, մեղանից բարձր, երկինքը պարզ է և լուսինը իր քաղցր լոյսն է թափում. տիրում է մի խաղաղութիւն. բարակ քամին թէև քշւում է մեր դէմքերին, բայց այնքան երկիւղալի չէ, որ մենք հեռանանք լուսնի լոյսից և պատերի մէջ ապաստան որոնենք: Բոլոր ուխտաւորներն էլ վճռել են քնել այդ արծաթափայլ շողերի տակ: Եւ յանկարծ հիւսիսից վրայ է հասնում այդ բանաստեղծական անդորրութեան դէմ մի խոժոռագէմ, երկիւղալի և կոպիտ փոթորիկ. ամպերը եռանդով դէպի հարաւ, դէպի լուսինն են արշաւում և կարծես ուզում են մինչև տեղ հասնելը վախեցնել, հալածել լուսինը շանթ ու որոտով, որոնք դուրս են թափւում նրանց զորշ-կապտագոյն ծալքերից և աջ ու ձախ վազում: Կայծակի դեղին բոցը փայլում է լուսնի սպիտակ լոյսի մէջ, բայց դեռ անզօր է նորան ոչնչացնելու, կարծես հալւում է, սկանում, կարճանում: Ամպերը գալիս են ու գալիս: Ո՛ր, պէտք է փախել այդ հրեղէն օձերի երեսից, որոնք գալարւում են սարսափելի արագութեամբ, ճեղքում են, պատռւում իրանց գոցութիւն տուող ամպերի կուրծքը: Բայց ո՛ր գնանք, ո՛ր գանենք մի ազատ անկիւն: Նրկու սենեակները լցւած են. մարդ ու անասուն մի յարկի տակ պաշտպանւում են երկնքի պատուհասից: Մնում է միայն վանքը. նա կը լինի մեր. պաշտպանն ու հովանաւորը. քահանան թոյլատրում է և մենք վերցնում ենք մեր վերմակը, մանում ենք լուռ ու մռայլ կամարների տակ, պառկում ենք մի անկիւնում: Այդտեղից էլ լսում ենք, թէ ի՞նչպէս մեզ ծանօթ խումբը շարունակում է իր ուրախութիւնը. փողը հանդարտ բռնացնում է, ոտով ու ձեռքով ոգևորութեան կրակի մէջ ընկած երգիչը անընդհատ իր թուրքերէնն է երգում, հանաքու ձայնը անհոգ որոտում դրսում:

Մենք քնում ենք: Այդ խոնաւութեան մէջ, այդ չոր գեանի վերայ քնելը գուցէ մի ուրիշ ժամանակ անխելքութիւն կը համարէինք, բայց այժմ կատարեալ երջանկութիւն է. և այնպէս քաղցրը քնում ենք, որ սաստիկ փոթորիկն ու անձրեւը երազ ենք կարծում: Դրսում ի՞նչ ուզում է, թո՛ղ լինի, մերը՝ քունն է:

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՕՐ.

Գիշերւայ անձրեւը սաստիկ է եղել. փափուկ ցեխ ենք կոխ տալիս, երբ առաւօտը շատ վաղ դուրս ենք դալիս մեզ հովանաւոր կամարների տակից: Մռայլ և վհատեցուցիչ է լինութիւնը. երկնքի երեսին դեռ կուտակւած են մոխրագոյն ծանր ամպերը. հողը, բոցսը, օդը խոնաւ են, ցուրտը մարդու ոսկորներին է հասնում: Մեղ ասում են, որ անձրեւի հետ հատ հատ ձիւն էլ է եկել:

Սարից իջնում ենք ուրիշ ճանապարհով, որ համեմատաբար յարմար է այնքան, որ սալեր են գնում մինչև վանքը: Բայց սալի ճանապարհ ասելով մեծ բան չը կարծէք, նոյն լեռնային ճանապարհն է, այն զանազանութեամբ, որ քիչ լայն է և այնքան մեծ լանջիվայրեր չունի: Միայն Ղարաբաղի զոմէշներն են, որ այս տեսակ ճանապարհներով սալ են քաշում: Ես տեսայ թէ ինչպիսի մեծ ծառայութիւն է անում այդ հսկայ և անճոռնի անասունը այս տեսակ տեղերում: Ինձ հետ մի սալ էր գնում, որի վերայ նստած էր մի պառաւ ուխտաւոր կին: Մի տեղ ճանապարհը յանկարծ բարձրանում է, մի շատ թեք զառիվայր է կազմում: Գիւղացիները շրջապատել էին սալը, որ ձեռքերով և ուսերով օգնեն զոմէշներին սալը դէպի բարձր տանելու համար. աղաղակ, իրարանցում, միմեանց ջրամայում են, ամեն մէկը մի տեսակ կարգադրութիւն է անում: Բայց մինչև մի բան վճռելը՝ աջ կողմից լծած ջահէլ գոմէշը, գլուխը դէս ու դէն ծռմռելով՝ ձգեց, համարեա՝ մենակ տարաւ սալը զառիվայրի գլուխը: Անհանգիստ աղաղակները զարմանքի և գովասանքի են փոխւում:

—Ա՛յ, ուսի՛դ մատաղ, ըհէ՛յ, գոչեց փաղաքշական քաղցր ձայնով մի գիւղացի: Ես նայեցայ, տեսայ որ դա աղքատ հագուստի մէջ մի մարդ է, բաւական համակրելի դէմքով, միջին հասակի տէր: Նա նայում էր զոմէշին, որի ուսին մատաղ էր գնում, և այդ րոպէին նորա դէմքը ուրախ էր, հպարտ:

—Լաւ անասունը լաւ բան է հա՞, հարցնում եմ ես:

—Բո՛, քե՛զ մատաղ, ի՛նչ ես ասում, տղա՛մարդ է, տղա՛մարդ, թիւ ու թիկունք է: Գիւղի մարդ ենք, արհեստ չունենք, ոռճիկ չունենք, մերն էլ դրանք են՝ անասունները: Լաւ, տղամարդ անա-

սուներ որ դրանն է լինում, գլուխս նորան մատաղ, մարդ խիլ միտք էլ չի անում:

Շատ հասկանալի է, թէ ինչո՞ւ գիւղացին անասունը իր երեխայի պէս է սիրում, պահում է, պաշտում և երբ նա սատկում է, սև սուգը գալիս է Կամբոջ ընտանիքը պատում:

Օրը հետզհետէ բացւում է, արեգակի նւազ լոյսը անցնում է ամպերի միջով, տխուր և թույլ լոյս է սփռում թրջած երկրի վերայ: Պատահում են ուխտաւորներ, որոնք մօտիկ գիւղերից վանքն են գնում: Ահա ձանապարհի կողքով մենակ գնում է գեղջկուհին, երեսը ծածկած է, թւի տակ տանում է մի աքաղաղ: Ահա գնում են և երեք երեխաներ, մի էշ և մի ոչխար: Մեր ձիերը տեսնելուն պէս՝ փոքրիկները քաշւում են մի կողմ, կանգնում են, նայում են մեզ զարմացած, բերանները բաց. նորանց մօտ կանգնած է մատաղացու ոչխարը նոյն չափ զարմացած, դունչը վեր ցցած: Եւ երբ մենք անցնում ենք, լսում ենք նորանց կարծիքը, որ շտապում են հաղորդել միմեանց մեր մասին:

— Ռուսներ'ր են, է'...

Գիւղացին ինձ հետ է: Նա Ղշլաղեցի է, ունի մեծ ընտանիք: Հարցնում եմ նորանց ապրուստի մասին: Ապրուստը դժւարացել է, պատմում էր նա:— Ի միջի այլոց նա պատմում է, թէ ի՞նչպիսի «օյիններ» են դնում նորանց գլուխը խեղճ, վիզը ձկած «միրզաները», որ քաղաքում այնպէս խոնարհ և աննշան բան են երևում, հէնց որ գիւղերն են գնում, առիւծ են դառնում: Տղրուկներ են, աներես, անկուշտ աղրուկներ, որոնք գոյութիւն են ստանում հէնց այս գիւղերից: Մի որ և է տեղ գրագիտութիւն սովորելով, գիւղացին վազում է մտնում որ և է դիւանատուն, քիթը կապած հարսի պէս ծառայում է, շատ անգամ ուռճիկ չի ստանում, տանում է ամեն տեսակ ստորութիւն, մոռանում է իր գիւղը, քաղաքացի է դառնում և մինչև մազերը սպիտակելը ֆնալով միևնոյն պաշտօնում, ապրում է գիւղացու հաշուով, միշտ ի չարն է դործ դնում նորահաւատը, աղաչանքը: Ամեն կեղտոտութիւն դուրս է գալիս նորանից, այն գիւղացուց, որ ուսումի հետ ստացել է սաստիկ ընչասիրութեան քաղց:

Հասնում ենք սարի ստորոտը, անցնում Ռէյլ գիւղի միջով: Դա

մի փոքրիկ գիւղ է, ունի մի քանդաժ եկեղեցի. գիւղացիներն այն-
քան աղքատ են, որ չեն կարողանում եկեղեցու քանդաժ կտուրը
շինել, թէև քահանայ ունին: Տները գետնափոր են, ցածրիկ և
ողորմելի, մի ողորմելի լանջիվայրից կաժ, որի կողքով հոսում է
մի ողորմելի բարակ ջուր: Այդ աղքատ առուակն է, որ ջրում է եր-
կու-երեք հատ բանջարանոցներ:

Ռէվից շատ մօտիկ է Ղշլաղ գիւղը, որ թէև նորանից մեծ է,
բայց էլի աղքատ: Ղշլաղում մենք իջնում ենք մի տան բակում,
նստում ենք հաստ ու կոպիտ տախտակներով պատած մի ինչ որ
Դաժկի տակ: Տանտիկինը մեզ համար մի շքեղ ձևածեղ է պատ-
րաստում, հիւրասիրում է զոմշի համեղ մածնով: Հանդստանում ենք,
կազդուրում, մտադիր ենք մինչև իրիկուն Խաչքենդի հասնել: Մեր
առջևն այլ ևս չը կան բարձր սարեր ու մեծ մեծ անտառներ.
բնութիւնը աղքատ է, խոնարհ: Յիշում եմ մեր տեսած տեղերը և
մի վերջին անգամ տեսնելու համար՝ նայում եմ դէպի Սէյիդի-շէնի
կողմը. առաջին անգամ տախտակների ճեղքով իմ աչքին երևում է
Պաշաղակաբերդի գլուխը: Զարմանալի՝ բերդ. ուր որ գնում ես, աչ-
քիդ առջևն է, ամեն տեղ ցոյց է տալիս իր յանդուգն գլուխը, որ
արհամարհական հպարտութեամբ բարձրացած է այստեղի վերայ:

Թողնելով Ղշլաղ գիւղում մեր Վարադաբոյնցի բնակրին, ձի ենք
նստում և բռնում ենք դէպի Շուշի տանող ճանապարհը: Երկինքը
ամպերի սաստիկ մրցութեան ասպարէզ է դարձել. երբեմն արևն է
հաստատում և մեզ այրում, իսկ երբեմն թեթև անձրևն է կաթ-
կաթում: Ահսօրից մօտ անցնում ենք Դաշբուլաղ գիւղի մօտով, որ,
երևի, այդ անունն ստացել է մեծ աղբիւրից, որ բղխում է քարի
միջից: Այդ գիւղում կան քաղաքի տների ձևով շինած տներ, ինչ-
պէս նկատելի է, ունեւորները շատ են: Անցնում ենք Խոջալլուի գետը
թթի աջփնների միջով, գնում ենք բաւական ուղիղ ճանապարհ-
ներով: Բայց ամպերը, երևում է, չը պիտի թող տան մեզ հան-
գիստ կերպով մեր ճանապարհը վերջացնելու, նորանք հաւաքուել
են մի տեղ. օդը ծանրացել է, խեղդում է մեզ, քրտինքը առատու-
թեամբ դուրս է թափւում, և շուտով մեր գլխին պտոյտ են դալիս
որոտոցն ու կայծակը. անձրևը մեզ բռնում է Դահրաւ գիւղի մօտ
և նորանից ազատւելու համար մենք մտնում ենք տեղացի քահա-

նայի երկարկանի նորաշէն տունը: Տէր հայրը մեզ լաւ ընդունում է պատշգամբի վերայ, թէեւ ինքը հիւանդ պառկած է: Շուտով արեգակը արեւ է տալիս, մենք էլի ճանապարհորդում ենք: Անձրեւը մէկ էլ վրայ է հասնում Բալլուջայ գիւղից վերեւ. թրջւած մտնում ենք գիւղը, որ բաւական մեծ է և ունի մի նոր ու գեղեցիկ եկեղեցի: Զի կարելի ասել, որ այս գիւղն էլ աղքատ է. արդէն երբ բազմամարդ է, նշանակում է որ անպրոքստի միջոց կայ, իսկ անպրոքստը վատ չէ, քաղաքային ձևի տներ կան: Առհասարակ պէտք է ասել, որ մեր գիւղերը հետզհետէ կերպարանափոխւում են. հնադարեան գետնափոր խրճիթները (ւղարադամօ—սեւ տուն) իրանց կողոր կտուրներով և ահագին երդիկներով հետզհետէ անհետանում են և նորանց տեղը երեւան են դալիս փոքրիկ տներ՝ փոքրիկ լուսամուտներով և տափակ կտուրներով: Նորաձեւութիւնը, անկասկած, մենակ շինութիւններին չի դիպում, այլ նորաձեւ դռներով ներս է մտնում ընտանիքի ծոցը. թէ ի՞նչ տեսակ յեղափոխութիւն է գործում նահապետական կարգերի, նիստ ու կացի և վարք ու բարքի մէջ—մեզ բոլորովին յայտնի չէ, այդ տեսակ բաներով հետաքրքրւողներից չենք: Բալլուջայի մօտ, գետի ափին, կայ մետաքսի գործարան. սա էլ ի հարկէ, իր ազդեցութիւնն է մտցնում գիւղացիների մէջ, որ էլի անպաշտ է. ընդհանրապէս գիտենք, որ այսպիսի տեղերում են տարածւում վեներական ատոտերը:

Բալլուջայից մօտ է Խնածախ գիւղը: Խնածախը Բալլուջայից փոքր է, բայց աւելի լաւ արտաքին տեսք ունի, որովհետեւ գիւղի մէջ ծառեր շատ կան: Ղարաբաղի հայ գիւղերը ընդհանրապէս տրխուր կերպարանք ունին, չոր ու ցամաք տեղերի վերայ են, ծառեր չեն տնկւում գիւղի մէջ. փողոցներ համարեա՝ չունին, կտուր կտրի վերայ է բարձրանում:

Խնածախը վերջին գիւղն էր, որ տեսնում էինք: Մութը հասած անցնում ենք նորա միջով և անդադար ձիերը քշելով՝ հասնում ենք Խանքենդի աւանը, ուր և զօրքերի բանակատեղին է:

Հրաշալի երեկոյ էր. երկինքը պարզ. բոլորակ լուսինը առատ լոյս էր թափում ծառերի մէջ կորած Խանքենդու վերայ: Նորա լացն և ուղիղ փողոցներում, ինչպէս և միշտ, տիրած էր մեռելային լուսութիւն: Զքնաղ անկիւն է այս Խանքենդին. փոքրիկ սպիտակ տները

Ծոյլ ու անհոգ կանգնած են ծառերի մէջ և նորանց փոքրիկ պատուհանների մաքուր ապակիների վերայ խաղում է լուսնի արծաթեայ ճառագայթը: Դարուն ու ամառ այդտեղ բուրում են ծաղիկները, անպակաս է մաքուր, առողջարար օդը: Մի տեղ շինած է շատրւան, որի պարզ ջուրը լուսնի լոյսի տակ պսպղալով հանդարտ մրմնջում է և թափւում գլխիվայր: Նրբեմն լսւում է փողոցով գնացողի ոտի ձայնը, կանաչադարձ բակի մի անկիւնից բառաչում է եղը, կամ փողոցի դրան քամակին պահապան շունը մի երկու երեք անգամ հաչում է: Անցնում են այդ ձայները, և կրկին մեռելային անվրդով լուռութիւնը մտնում է ծառերի տակ, շրջապատում է ու իր զօրեղ գրկի մէջն է առնում այդ բանաստեղծական անկիւնը: Մնում է բարձր կամարի պայծառ լուսատուն, որ ծանր գնում է՝ հաւատարիմ իր գիշերային ճանապարհին:

Մենք նստած խօսում էինք, պատմում էինք մեր ծանօթներին մեր այս հինգ օրեայ տպաւորութիւնները: Հեռու տեղեր չէինք գընացել, բնութեան աշխարհահռչակ հրաշալիքները չէինք տեսել, մարդկային հանճարի դիւթող կերտածներով չէինք զմայլւել: Տեսել էինք մեր երկիրը, խմել էինք բազմաթիւ քաղցրահամ աղբիւրների ցուրտ-ցուրտ ջրերը, լեռների և ծմակների խոնավ, բայց մաքուր օդը ծածել էինք, կշտացել, կաղղուրւել. հայրենի հովը մրսացրել էր մեզ, արեգակը տաքացրել էր, լուսինը գգւել մեզ:

Նւ բաղդաւո՛ր էինք....